

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ՌՈՅԹԸՐԶ) - Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ մամլոյ ասուլիսի մը ընթացքին խստի քննադատեց Վրաստանը, ըսելով, որ ան հակակշիռ չունի Փանքիսի կիրճին վրայ, հակառակ անոր որ Վրաստան յիշեալ շրջանը նոր ուժ ուղարկած էր նահանգեալ օր:

Փութին ըսաւ, որ Թիֆլիս չէ՛նէ ըմբոստները կը շահագործէ Փանքիսիի մէջ՝ Ռուսիոյ դէմ ոտնձգութեանց համար, այնպէս ինչպէս «Քայլիտա»-ի Կիւնեալներ կ'օգտագործէին Աֆղանիստանը՝ Միացեալ Նահանգները հարուածելու համար:

## 2003Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՃԵԻ ՆԱԽԱԳԻԾ

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՐԷԿ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ.

#### Գ. ՆԻՍՏԸ՝ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՐԵՔՇԱՐԹԻ



Նախարարաց խորհուրդը երէկ շարունակեց 2003ի պետական պիւտճէի քննարկումը, որուն ընթացքին կարգ մը նախարարներ կատարեցին մատնանշումներ որդեգրուելիք նոր որոշումներու առնչութեամբ, նկատի ունենալով երկրին տնտեսական զգալուն վիճակը:

Պիւտճէի քննարկման նիստին ետք տեղեկատուութեան նախարար Լազար Արիտի իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ նիստի ընթացքին տիրած է դրական մթնոլորտ եւ բոլոր հարցերը քննարկուած են տարբեր դիտանկիւններէ՝ կարկինը լայն բանալով երկրին տնտեսական եւ ընկերային կացութեան վրայ եւ փորձելով հասնիլ ամբողջական եւ արդար լուծումներ բերող որոշումներու:

Նիստը համաձայն գտնուած է անգամ մը եւս հանդիպիլ յառաջիկայ Երեքշաբթի օր (3 Սեպտեմբեր) առաւօտեան ժամը 10:00ին, շարունակելու համար 2003ի պետական պիւտճէի քննարկումը:

Նիստը համաձայն գտնուած է անգամ մը եւս հանդիպիլ յառաջիկայ Երեքշաբթի օր (3 Սեպտեմբեր) առաւօտեան ժամը 10:00ին, շարունակելու համար 2003ի պետական պիւտճէի քննարկումը:

Նախարար Արիտի պատասխանելով լրագրողներու հարցումներուն հաւաստեց, որ տեղի ունեցած է լուրջ գործընթացներ, իսկ նախարարներուն կողմէ կատարուած են դրական մատնանշումներ եւ շինիչ առաջարկներ:

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԻՒՄԷՅՆ ՀԻՒՄԷՅՆԻ ԲՈՒՌՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԿԸ ԳՈՐԾԷ ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ՎՐԱՅ

Խորհրդարանի նախագահ Հիւսէյնի Հիւսէյնի քուէյթեան «Ռայի Սամ» (Հանրային կարծիք) օրաթերթին երէկուան համարին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ ողջունեց նախագահ Կոր. Էմիլ Լախուտի եւ Բըրնէթ Շահուանի հանդիպումին տեսակցութիւնը եւ խիստ քննադատութիւններ ուղղեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

«Հանրապետութեան նախագահը կողմ չէ, հետեւաբար ոչ մէկուն հետ երկխոսութիւն կ'ունենայ, այլ մտիկ կ'ընէ բոլորին եւ կը հովանաւորէ բոլորին միջեւ երկխոսութիւնը, որովհետեւ ան ունի ազգային պատասխանատուութիւններ, իսկ այս հանգրուանին անոր առաքելութիւնն է բարելաւել ստեղծուած մթնոլորտը եւ հնարաւորութիւն ստեղծել, որ կապուին քաղաքական այնպիսի համախմբումներ, որոնց բաղադրութիւնը ազգային եւ ընդհանուր է», ըսաւ ան:

«Նախագահ Լախուտի եւ Բըրնէթ Շահուանի հանդիպումի տեսակցութիւնը բնական է եւ պէտք է տեղի ունենար, որովհետեւ անհրաժեշտ է լսել

այդ խմբակի տեսակցութեան, ըսաւ Հիւսէյնի, մերժելով Բըրնէթ Շահուանի հանդիպումին ուղղուած այն ամբաստանութիւնները, թէ անոր անդամները դաւաճաններ են եւ իրենց գրաւը դրած են արտաքին ուժերու վրայ: Հիւսէյնի ըսաւ, որ վարմանալի չէ Բըրնէթ Շահուանի վերջին հաղորդագրութեան դրական շեշտը, որ վերահաստատեց հանդիպումին ու նախանձախնդրութիւնը ազգային սկզբունքային արեւելում ունենալու, ինչպէս նաեւ Թաէֆի համաձայնութեան ճշգրիտ գործադրութեան պահանջը:

«Նախագահ արժանի են վարչապետ Ռաֆիք Հարիրիի այն հաւաստիքները, թէ գործադրուած է Թաէֆի համաձայնութեան 97 առ հարիւրը, իրականութիւնը հակառակն է», ըսաւ Հիւսէյնի: Ան հաւաստեց, որ «վարչապետ Հարիրի 1992էն ի վեր հանդիսացած է պետութիւն

արեւելում ունենալու, ինչպէս նաեւ Թաէֆի համաձայնութեան ճշգրիտ գործադրութեան պահանջը: «Նախագահ արժանի են վարչապետ Ռաֆիք Հարիրիի այն հաւաստիքները, թէ գործադրուած է Թաէֆի համաձայնութեան 97 առ հարիւրը, իրականութիւնը հակառակն է», ըսաւ Հիւսէյնի: Ան հաւաստեց, որ «վարչապետ Հարիրի 1992էն ի վեր հանդիսացած է պետութիւն

Շար.ը՝ էջ 10

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԺԵՑ ԿԱԶԱ. ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՌԿԱԽՈՒԹԵԱՆ

Իսրայէլեան ուժերը կապալի ծովեզերեայ մէկ շրջանը ներխուժեցին երէկ՝ շուքի մէջ ձգելով ապահովութեան համաձայնութիւնը գործադրութեան դնելու ճիշդը: Իսրայէլեան զինուորական աղբիւրներ հաղորդեցին, որ կապալ քաղաքին մօտ շրջանի մը դէմ օդային, ցամաքային եւ ծովային յարձակումը գործուեցաւ, երբ զինքի մարտանշաններու միջադէպ մը արձանագրուեցաւ:

Յարձակումէն քանի մը ժամ ետք, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիամին Պըն Էլիապար առկախեց պաղեստինցիներուն հետ ապահովութեան հարցերու բանակցութիւնները: Պաշտպանութեան նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը յայտնեց, որ Պըն Էլիապար առկախեց պաղեստինեան իշխանութեան ներքին գործոց նախարար Ալտէլ Ռաֆիք Եահիայի հետ հանդիպումը, որ տեղի պիտի ունենար երէկ: Յայտարարութիւնը կ'աւելցնէր, որ առկախման պատճառը կապալի մէջ հրէական բնակեցման վայրի մը դէմ ռումբի մը արձակման միջադէպն է, որ տեղի ունեցած էր Երեքշաբթի գիշերը: Պաշտպանութեան նախարարը կ'ակնկալէր, որ պաղեստինցիները աւելի վճռական քայլեր առնեն մեղմացնելու համար վայրագութեան այիթը, աւելցուց յայտարարութիւնը:

Շար.ը՝ էջ 10

## ԱԶՐՊԵՅՅԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԵՍՊՊԱՆԸ Կ'ՈՂՋՈՒՆԷ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԾՈՎ ՊԱՔՈՒԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Արաբական մէջ Գերմանիոյ դեսպան Քլաուս Կրիտլիչ երէկ Պաքուի մէջ հանդիպում մը ունեցած է Արաբական նախագահ Հայտարար Ալիեւի հետ, որմէ ետք ան ողջունած է «Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման մէջ Պաքուի դիրքորոշման փոփոխութիւնը»: Գերմանիոյ դեսպանին համաձայն, եթէ Պաքու նախագահ «ամէն ինչ, կամ ոչինչ» կ'ըսէր, այժմ պատրաստ է փոյլ առ փոյլ լուծելու տագնապը:

Լուրը հաղորդող «Ապտուրիւն» ռատիոկայանը յայտնեց, որ գերմանացի դիւանագետը նկատի ունի Արաբական նախագահի միջեւ երկարաւիշի հաղորդակցութեան հաստատումը, փոխան հայկական ուժերու հակակշիռի տակ գտնուող չորս շրջաններէ հայկական ուժերու հեռացումին:

Կրիտլիչ իր նկատած այս փոփոխութիւնը «դրական քայլ» համարած է: Ան նաեւ ողջունած է Պաքու - Թիֆլիս քարիւղատարի շինութեան որոշումը եւ նշած է, թէ քարիւղատարի շինութիւնը կ'օժանդակէ Արաբական մէջ կայունութեան հաստատման:

## ՎԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱԶՐՊԵՅՅԱՆԻ ՎԱՇՈՒՈՅՆ ԼՐՏԵՍՈՂՆԵՐԸ ՎԱՅԵՐ ՉԵՆ

Արաբական հաշուոյն լրտեսութիւն կատարելու ամբաստանութեամբ այս ամսուան սկիզբը ձերբակալուած 4 անձերը խոստովանած են իրենց յանցանքը:

Հայաստանի Ազգային անվտանգութեան նախարարութիւնը 21 Օգոստոսին յայտարարած էր, թէ չորս անձեր, որոնք Հայաստանի քաղաքացիներ են եւ որոնց անունները չեն յայտարարուած, ձերբակալուած են Հայաստանի քրեական օրէնքի 59րդ յօդուածին հիմամբ՝ լրտեսութեան ճամբով հայրենիքի դաւաճանութիւն:

Կատարուած կողմէ նշանակուած եւ ամբաստանաւորութեան պաշտպանութիւնը ստանձնած փաստաբան Գէորգ Մելքոնեան յայտարարեց, որ ամբաստանաւորները ազգութեամբ հայեր չեն, ունին ռուսական եւ ուքրաինական ծագում, եւ նոյն ընտանիքի անդամներ են՝ ամոլ մը եւ իրենց երկու ազգականները: Անոնք 1988ին Արաբական Հայաստան գաղթած են եւ Եղեգնաձոր շրջանի բնակիչներ են: Ըստ Մելքոնեանի, ամբաստանաւորները խոստովանած են, թէ Արաբական ներքին գործոց եւ պաշտպանութեան նախարարութիւններէն ստացած են «փոքր» գումարներ, փոխան Հայաստանի վերաբերեալ որոշ տեղեկութիւններու, որոնց փոխանակումը տեղի ունեցած է Թիֆլիսի մէջ: Որոշ տեղեկութիւններու համաձայն, չորս ամբաստանաւորները ապրիլեանական գաղտնի ծառայութիւններու հետ կ'աշխատակցէին շուրջ 7-8 տարիէ ի վեր:

## Յ. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅՑՈՒՑԻՉԻՆ ՅԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ՝ ՅԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԺԱՆԹԻՆ - ՅԱՅԱՍՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ՇՈՒՐՁ

Երկուշաբթի, 26 Օգոստոսին, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեան Պուլիսոս Այրէսի մէջ հանդիպում ունեցաւ միջազգային իրաւունքի մասնագէտ, քրեական հարցերու իրաւագէտ Լեւոն Արայանեանի հետ: Հանդիպումին մասնակցեցան Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ ընկ. Մարիո Նալպանտեան, Հ. Յ. Դ. Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի հերթապահ ընկ. Յարութիւն Օհաննէսեան եւ Կ. Կոմիտէի անդամ ընկ. Փետրո Մուրատեան:

Լեւոն Արայանեան 1985ին նախագահած է այն դատարանին, որ դատեց Արժանթինի զինուորական բռնատիրութեան պատասխանատուները:

Հանդիպումի ընթացքին քննարկուեցան Հայոց Գեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ տարուող աշխատանքները, այդ աշխատանքներուն իրաւական նոր լիցք տալու հնարաւորութիւնները: Արժանթինեան նաեւ Արժանթինի եւ Հայաստանի փորձառութիւնները՝ ընկերային, տնտեսական եւ քաղաքական բնագաւառներու մէջ:

Նոյն օրը, Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հ. Մարգարեան, նոյն ընկերներու ընկերակցութեամբ, հանդիպում ունեցաւ Արժանթին - Հայաստան Առեւտրի Պալատի նախագահ Մանուէլ Արայանեանի եւ վարչութեան անդամ Ռիթա Աճէմեանի հետ: Հանդիպումեան Հայաստան - Արժանթին առեւտրի կարելիութիւնները, ընկ. Մարգարեան անդադարձաւ Հայաստանի մէջ տնտեսական գործունէութեան համար ստեղծուող բարենպաստ մթնոլորտին եւ իրաւական դաշտին: Արժանթին - Հայաստան Առեւտրի Պալատի ներկայացուցիչները անդադարձաւ այն դժուարութիւններուն, որոնց հանդիպած են Արժանթինէն հայ գործարարներ՝ Հայաստանի մէջ տնտեսական նախաձեռնութիւններու կապակցաբար: Ընկ. Մարգարեան յանձն առաւ այդ դժուարութիւններու լուծման համար աշակցութիւն ցուցաբերել:

### JERMUK ՋԵՐՄՈՒԿ

ԱՆՄԱՐԱԿԱՆ ՋՈՒՐՆ ՎԱՅՈՑ ԱՐԴԵՆ ՇՈՒԿԱՅԻ ԿՐԱՅ Է

Նոր հասած հանքային բնական կազով թարմ ջուրը: Փաստիկ եւ ապակեայ շիշերով: Կրճաք գտնել բոլոր սիւֆիթընթերթներուն եւ նպարավաճառներուն մօտ:

Մեծաքանակի համար դիմել՝ «UNIVERSE» հաստ., Պուրճ Համուտ, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք, Արմենիա Պողոտայ կամ ցրուիչ «VAK TRADING COMPANY»-ի: Ել. 03-626177 եւ 03-773609: Տաքս: 961 1 563436 - E-mail: VAK\_Trading@hotmail.com

### ՃԱՇԱՐԱՆ ՈՒՎՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(ժուրտ էլ Պալոթ, Պալալիմն դեպի Պրումանայի ճամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԳ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադրած ճաշեր, սակ մէկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապսպըրումի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամէն Ծաբթ երեկոնները յատուկ յայտագիր հանրածաճօք երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուհի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խրախմբութիւն յարմար գիներով:

ԾԱՆՈԹ. Յատուկ ճաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օղի, գարեջուր եւ զովացուցիչ:

Մէկ անձի համար միայն 17\$: Ընդամանը. 04 - 808707 եւ 03 - 360667:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅՆՃԱՐԻ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԲԸ ՔԵՍԱՊԻ ՄԷՉ



17 Օգոստոսի կէսօրին, մեծ խանդավառութիւն կը տիրէր Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի ակումբին մէջ: Արդարեւ, նորակազմ շեփորախումբը կը պատրաստուէր մեկնելու Քեսապ, մասնակցելու համար Ս. Աստուածածնի ժողովրդային տօնախմբութեան, որ ամէն տարի առիթ կը հանդիսանայ հազարաւոր հայորդիներու համախմբման, Սուրբի տարբեր շրջաններէն, Լիբանանէն եւ նոյնիսկ հեռաւոր երկիրներէ: Շեփորախումբի անդամները բարձր տրամադրութեան մէջ են ոչ թէ անոր համար որ Քեսապը պիտի տեսնեն եւ նուազեմ մատաղի պատրաստութեան առիթով, այլ մանաւանդ՝ որովհետեւ «քայլ մը անդին» պատմական Մուսա Լեռն է, եւ իրենց երեսը դէպի հայրենի գիւղերը ուղղած պիտի նուազեն:

\*\*\*

Շաբաթ, ուշ երեկոյան, ժամը 10:30ին, շեփորախումբը կը հասնի Քեսապ՝ 26 նուագողներով եւ 5 օգնականներով: Զիրենք կը դիմաւորեն Քեսապի ազգային մարմիններու ներկայացուցիչներն ու Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն մասնաճիւղին պատասխանատուները: Թէեւ խումբը յոգնած է երկարատեւ ճամբորդութենէն, սակայն խմբավարը Պարզեւ Թասլաբեան աղապէս չէ: Կէս զիշերին շեփորախումբը կը սկսի փորձ - կատարումի մը՝ թրքական սահմանին վրայ եւ յաջորդաբար կը նուագէ «Լուսին չկար», «Ջարթիր Լաօ», «Բամբ որոտան», չըջանը թնդացնելով եւ ծայրը հասցնելով թուրք սահմանապահ զինուորներուն...: Վերջին կատարումը կ'ըլլայ «Հալէ հալէ նի-նոյէ» ազգագրական երգը, զոր շեփորախումբը պատրաստած էր յատուկ այս առիթին համար:

Կիրակի, 18 Օգոստոսի առաւօտեան, Քեսապի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ սկսաւ Ս. պատարագը: Քեսապի ամբողջ հայութիւնը համախմբուած է եկեղեցւոյ շրջափակը: Պատարագի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի զոյգ շեփորախումբերու առաջ-



Նորդուժեամբ ժողովուրդը քալեց մինչեւ նորակառուց համալիր:

Քայլարշարը սկսաւ սուրիական քայլերգով, զոր կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի շեփորախումբը՝ քառաձայն նուագով եւ բարձր կատարումով:

Քայլարշարին աւարտին, շեփորախումբը մեկնեցաւ մատաղի պատրաստութեան վայրը, ուր հերիսան կը պատրաստուէր յաջորդ օր բաշխուելու համար ուխտաւորներուն:

Շեփորախումբը գիշերը ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղին սկսուածական խորհրդակցութեան՝ հասնելի ժամեր անցընելով:

Երկուշաբթի, 19 Օգոստոսի առաւօտեան ժամը 9:00էն 10:00, շեփորախումբը ելոյթ ունեցաւ ազգային մարմիններու եւ հիւրերու ներկայութեան: Ներկայ էր նաեւ Բերիոյ թեմի առաջնորդ Սորէն արք. Գաթարոյեան, որ կը հովանաւորէր տօնախմբութիւնը: Այս բաժնին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հ. Ե. Լ. Ի փողերախումբը: Հակառակ տեղատարափ անձրեւին, շեփորախումբը շարունակեց նուագել ինչեցնելով 1939 թուականի տեղատարափ անձրեւին տակ մոսաւրուցի գաղթականներուն Պասիթի պարը:

Խանդավառութիւնը մեծ է: Պատմականօրէն դրացի գիւղերուն (Մուսա Լեռ եւ Քեսապ) երիտասարդ սերունդը կամուրջ նետած է Այնճարէն Քեսապ, ամուր պահելու համար կապը հայադրոշմ զոյգ գիւղերուն միջեւ:

\*\*\*

Ուշ գիշեր է, Այնճարի հանդարտ գիշերուան մէջ յանկարծ կը հնչէ «Լուսին չկար»... Շեփորախումբը Քեսապէն վերադարձած է հոգեկան մեծ բաւարարութեամբ: Անկալելի են նոր հանդիպումներ յառաջիկային:

Ե. ՀԱՒԱԹԵԱՆ

## ՅՈՒՇԱՅԵՐ

# ԵԹԷ ՅՈՂՆԱԾ ԷՔ...

Ես այս վերջին երկու ամիսները անցուցի հազով ու հարբուխով: Հարբուխը ծանր տուրք մըն է, զոր ամէն տարի առնուազն երկու անգամ կը վճարեմ առ որ անկ է: Այդ օրերուն սաստիկ կը տառապիմ, որովհետեւ ծանր կ'անցնի իմ հարբուխը: Անոր ալ կը յաջորդէ նոյնքան ծանր հազ մը: Բայց այս լուրը ընդհանրապէս կը տեսնեմ շաբաթ մը, ո'չ աւելի: Մինչդեռ այս տարի այդպէս չեղաւ: Երկու փրկուելի հարբուխէն ու հազէն: Մէկը անցան, միւսը սկսաւ: Յետոյ հարբուխը վերադարձաւ: Հարբուխին կրկին յաջորդեց հազը: Եւ այսպէս շարունակաբար:

Երբ հարբուխի ծանր օրերէս մէկն էր, բարեկամ մը խմբագրատան սենեակէն ներս մտաւ եւ ուզեց ողջադուրուիլ ինձի հետ:

- Հեռու կեցիր, ըսի, հարբուխ եմ: Չեմ ուզեր որ վարակուիս:

Նախ այնպէս ձեւացուց, որ կարեւորութիւն չէր տար վարակումի վտանգին: Յետոյ ըն-

թացք տուաւ հրաւերիս եւ հրաժարեցաւ հետս ողջադուրուելէ: Մօտաբարապէս կէս ժամ նստաւ: Խօսեցանք հոսկէ հոնկէ: Յետոյ գնաց: Մտա՛ցի, որ եթէ այս մէկ կամ երկու օրուան ընկածքի ան ալ հարբուխ ունենար, պիտի մտածէր որ ինձմէ առած էր այդ հարբուխը:

Հարբուխը բոլոր վարակիչ հիւանդութիւններուն միջեւ ամէնէն վտանգաւորն ու կարեւոր չէ: Ինչ վտանգաւորն ու վարակիչ հիւանդութիւններ կան, որոնցմէ պէտք է պաշտպանուինք ամենայն զգուշութեամբ: Բայց հարբուխը մեր ամէնօրեայ կեանքին մէջ այն վարակիչ հիւանդութիւնն է, որուն հետ դէմ յանդիման կրնանք մնալ շատ յաճախ, քանի որ այդ վարակիչ հիւանդութեան տէրերը անկողնի մը մէջ պառկած չեն, այլ կը պտտուի ամէն կողմ, ոտքի են, մարդոց հետ շփոււմ ունին:

Եթէ մէկէ մը խնդրեմ, որ ինձի համըն ամէնէն ծանօթ քանի մը վարակիչ հիւանդութիւններու անուանները, կը կարծեմ, որ կրնայ քանի մը անուն համըն: Բայց ես գիտեմ, որ ընդհանրապէս կան ուրիշ վարակիչ հիւանդութիւններ ալ, որոնք յաճախ կը մոռցուին, որովհետեւ իբր հիւանդութիւն ընդունուած չեն: Ամէնէն ծանօթ օրինակը՝ յօրանջելու գործողութիւնն է: Գիտեմք, որ եթէ մէկը մեր դիմացը յօրանջէ, անիջելապէս մենք ալ պիտի յօրանջենք: Չեմ գիտեր, թէ ունի մէկը կրցած է լուծել այս վարակումին գաղտնիքը: Չեմ գիտեր, թէ նաեւ բոլորին համար ի գործ է այս օրինակը: Ինձի համար, ի գօրու է: Անկարելի է, որ մէկը դիմացս յօրանջէ եւ անմիջապէս ես ալ յօրանջելու փափաքը չունենամ: Ասոր կապուած է նաեւ քնանալու տրամադրութիւնը: Եթէ դիմացս տեսնեմ մէկը, որուն աչքերը կը գոցուին, որ կը պայքարի քունի դէմ, կը զգամ, որ իմ ալ կոպերս ծանրանալ կը սկսին:

Քունն ալ վարակիչ հիւանդութիւն մըն է, փոխանցելի է, մէկ մարդէն կ'անցնի միւսին: Ուրիշ պարագայ մըն ալ կայ: Ես կը հաւատամ, որ պայման չէ որ դիմացին քուն ունենայ, որպէսզի ես ալ քնանալու փափաք ունենամ: Կեանքիս մէջ ծանցած եմ քանի մը անձեր, որոնք բաց ու արթուն աչքերով նստած են դիմացս, բայց քուն պատճառած են ինձի: Մաստիկ կը վախնայի, որ այդ անձերը կրնային այնպէս շարունակ չկորցնի փրկուելի հարբուխէն ու հազէն: Մէկը անցան, միւսը սկսաւ: Յետոյ հարբուխը վերադարձաւ: Հարբուխին կրկին յաջորդեց հազը: Եւ այսպէս շարունակաբար:

Բայց այն փոխանցելի հիւանդութիւնը, որուն մասին մարդիկ մեծ բան մը չեն գիտեր եւ որուն մասին խօսիլ պիտի ուզէի հիմա, յոգնութիւնն է:

Այո՛, սխալ չէ: Յոգնութիւնը: Մէկու մը յոգնած ըլլալու վիճակը:

Ահաւասիկ վարակիչ հիւանդութիւն մը, որմէ սաստիկ կը վախնամ: Կը վախնամ, որ յոգնած մէկը դիմացս նստի ու կը վարակուիմ: Ահաւասիկ, ենթադրեմք, որ շատ ետանդուն եւ արդիւնաւէտ աշխատանքով զբա-

ղած եմ, երբ այցելու մը կ'ընդունիմ: Գործս կ'ընդհատեմ ու կը դիմաւորեմ: Այցելու զիմացս կը նստի յոգնած վիճակով ու հոգեվիճակով: Նախ յոգնած է երկու սանդուխներէն, որոնցմէ մագլցեցաւ, մինչեւ որ եկաւ քովս: Յետոյ յոգնած է իր առօրեայ աշխատանքէն: Նաեւ իր կեանքէն: Դիմացս կը նստի ու աչքերուս մէջ կը նայի: Ձի խօսիր: Ես արդէն անմիջապէս հասկցած եմ, որ յոգնած մարդ է: Յարգանք, բիւր յարգանք իր յոգնութեան: Ես չեմ, որ միշտ կը պնդեմ, թէ մարդու աշխատանքի ու մաքուր ապրումի յոգնութիւնը սուրբ է: Ուրեմն յարգանք այդ յոգնութեան: Միայն թէ այդ վարկեանքին կը զգամ, որ երակներուս մէջ արեան հոսքը քիչ մը կը դանդաղի: Յանկարծ ծանրութիւն մը կը զգամ աչքերուս մէջ: Գլուխս կարծես քիչ մը աւելի կը ծանրանայ: Կարծես այս բոլորը չէին բաւեր, կ'անդադրուեմ ու թուլուլութիւն մը կը սկսի իջնել մարմնիս վրայ: Այցելու տակաւին կը նայի աչքերուս մէջ, որովհետեւ կը սպասէ, որ քիչ մը հանգնի, որպէսզի խօսիլ սկսի: Բայց անխուսափելի պատահած է արդէն: Ես զիս դժուարութեամբ կը զգայեմ, որպէսզի չյօրանջեմ: Ան իր յոգնութիւնը ինձի փոխանցած է:

Քիչեր միայն գիտեն, բայց յոգնութիւնը փոխանցելի է: Խնդրեմ, եթէ յոգնած էք, քովս մի՛ գաք...:

Ռ. ՀՍՏԷՃԵԱՆ

## ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ

Վերջերս, ամերիկահայ Ջարեհ Պ. Պտուկեանի ընտանիքը «Հայ դրամագիտական ընկերակցութեան» նուիրեց իր հրատարակած հայ դրամագիտական գիրքերուն պահեստը: Այս գիրքերը կը պարունակեն «Coinage of the Artaxiads of Armenia» (Լոնտոն, 1978, 81 էջ, 8 տախտակ, լաթակազմ), «Coinage of Cilician Armenia» (բարեփոխուած հրատարակութիւն, Տէնպլըրի, Քրենէթիքէթ, 1979, «XXI», 494 էջ 12 տախտակ, կազմուած), ինչպէս նաեւ՝ իր ցուցահանդէսներուն սքանչելի ծանուցագիրքները: Պտուկեան կը դասուի ոչ միայն հայ դրամագիտութեան ճարտարապետը, այլեւ՝ 20րդ դարու ամէնէն հուշակաւոր հայ դրամագէտը: Տասնեակ մը տարիներ իր գիրքերը անգատանելի էին:

«Հայ դրամագիտական ընկերակցութիւն»ը կը փափաքի հանրութեան մատչելի դարձնել այս գիրքերը եւ հասոյթը տրամադրել Պտուկեանի ուսումնասիրութիւններուն երկրորդ հատորին հրատարակման: 1981ին, ընկերակցութիւնը հրատարակեց դոկտ. Ջարեհ Պտուկեանի դրամագիտական աշխատանքներու հաւաքածոն, իբրեւ առաջին մենագրութիւնը «Յատուկ հրատարակութիւն» մատենաշարին: Ներկայիս կը ծրագրուի պատրաստել իր ուսումնասիրութիւններուն երկրորդ հատորը՝ բանասիրական պրպտումներու ժողովածուն: Այս հատորը պիտի ըլլայ «Յատուկ հրատարակութիւն» մատենաշարին 10րդ թիւը: Այս պատճառով ընկերակցութիւնը այս եւ իր կողմէ հրատարակուած այլ գիրքեր գեղջեալ գիներով կը վաճառէ:

Գիրքերու ցուցակէն օրինակ մը ստանալու համար դիմել Armenian Numismatic Society 8511 Beverly Park Place, Pico Rivera, CA 90660, U.S.A. Ե - նամակ ArmNumSoc@aol.com.

## 1000 ԴՐԱՄՆՈՅ ՆՈՐ ԹՂԱԴՐԱՄՆԵՐ

1 Յուլիսին ի վեր, Հայաստանի մէջ շրջանառութեան դրուած են 2001 թուականի նմուշի 1000 դրամի (մօտաւորապէս 1,7 տոլար) նոր թղթադրամներ, որոնք տպագրուած են Աւստրիա, 10 առ հարիւր բամպակէ թուղթի վրայ: Նոր թղթադրամները կը կրնն իլեմուտքի եւ տնտեսութեան նախարար Վարդան Խաչատրեանի ստորագրութիւնը: Ընթացքի մէջ է նաեւ 5000 դրամի արժէքով նոր թղթադրամներու պատրաստութիւնը: Յառաջիկայ տարի շրջանառութեան պիտի դրուին 10,000 դրամի արժէքով թղթադրամներ եւ կը նախատեսուի հրատարակել նաեւ 20, 50, 100, 200 եւ 500 դրամ արժէքով մետաղէ դրամներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԸ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐ ՀՈՒՅՑԱԻ

Օգոստոս 24ին, Հայաստանի կառավարութեան յատուկ յանձնարարութիւնը մը որոշեց երկրի էլեկտրականութեան բաշխիչ ցանցը վաճառել «Միտլընտ Ռիսորսըզ» ընկերութեան:

Օգոստոս 26ին, այս գծով համաձայնութիւն մը կնքուեցաւ Հայաստանի կառավարութեան եւ ճշեալ ընկերութեան միջեւ: Հայաստանի կառավարութեան կողմէ համաձայնագիրը ստորագրեցին ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեան, էլեմուտքի եւ տնտեսութեան նախարար Վարդան Խաչատրեան, պետական գոյքի կառավարման նախարար Դաւիթ Վարդանեան եւ արդարագիտութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան, իսկ գնող կողմը ներկայացուց ընկերութեան տնօրէն Անտոն Զաւրաթով: Հայաստանի կառավարութեան արտակարգ նախարար ընթացքին վաւերացուեցաւ նաեւ սեփականաշնորհումը վաւերացնող օրէնքի նախագիծ մը:

Ըստ համաձայնութեան, «Միտլընտ Ռիսորսըզ» ընկերութիւնը պիտի ունենայ բաժնետոմսերու 80,1 առ հարիւրը: Բաշխիչ ցանցերու ընկերութեան ընդհանուր արժէք ճշդուած է 40 միլիոն տոլար: Միտլընտ Ռիսորսըզ պիտի վճարէ բաշխիչ ցանցերուն նախապէս կուտակուած 25 միլիոն տոլարի պարտքը, իսկ 80,1 բաժնիքի համար՝ յաւելեալ 12 միլիոն եւ 15 հազար տոլար:

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան յայտարարեց, որ ըստ օրէնքի, ընկերութեան բաժնետոմսերուն 19,9 տոկոսը պիտի վաճառուի Վերակառուցման եւ Զարգացման Եւրոպական Դրամատեան Նախարար Դաւիթ Յարութիւնեան դիտել տուաւ, որ բաժնետոմսերու վաճառքի համաձայնութեան մէջ յստակ նշուած է, որ «Միտլընտ Ռիսորսըզ»ը բաշխիչ ցանցը պէտք է կառավարէ ուժանիւթի մարզին մէջ մասնագիտութիւն ունեցող խումբի մը կամ ընկերութեան մը միջոցով, որ պիտի վաւերացուի սեփականաշնորհման յանձնարարութեան կողմէ:

Ընդունուած օրէնքին համաձայն, «Միտլընտ Ռիսորսըզ» ընկերութիւնը յառաջիկայ 7 տարիներուն իր բաժնետոմսերուն 75+1 տոկոսը չի կրնար վաճառել, իսկ 67 առ հարիւրը երբեք ծախելու իրաւունք չունի:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 10ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՉ

«Հայաստան» Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի վարչութեան կազմակերպութեամբ, 24 Օգոստոսի երեկոյան ժամը 8:00ին, Լաս Վեկասի «Էմ.Ճի. Էմ.» պանդոկին, «Կրէնտ արեւա»ի մէջ, շուրջ չորս հազար հայորդիներու ներկայութեամբ, տեղի ունեցաւ հիմնադրամին 10ամեակին նուիրուած գեղարուեստական ձեռնարկը:

Ներկայ էին հիմնադրամի կեդրոնական վարչութեան փոխնախագահ Հայաստանի Մասնաշաղկապի ղեկավար Գագիկ Յարութիւնեան, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Վալերի Մկրտումեան եւ հիմնադրամի հովանաւորները:

Ձեռնարկին բացումը կատարեց Գագիկ Յարութիւնեան: Ան նախ շնորհակտորեց հիմնադրամին 10ամեակը եւ ապա շնորհակալութիւն յայտնեց ներկայներուն: Կարճ կերպով անդրադարձաւ հիմնադրամին ծնունդին եւ անոր խորհուրդին մաս կազմողներուն անունները թուեց, ինչով ցարդ կատարուած գլխաւոր աշխատանքները, մանաւանդ՝ Ղարաբաղի ողջսիւնը հանդիսացող հիւսիս - հարաւ մայրուղիին կառուցումը:

Ապա յաջորդաբար ելոյթ ունեցան արուեստագէտներ Ռազմիկ Մանսուրեան, Միքայէլ Պողոսեան, Սիւզան Մարգարեան, Ջարուհի Պապայեան, Էմմա Պետրոսեան, Անտի, Ատիա Հարմանտեան, Բուպրիթ Ամիրխանեան, Կոստանդին Օրբէլեան, Սամուէլ Իրվինեան, Արա Գէորգեան, Ջիւսէ Գասպարեան, Շուշան Պետրոսեան, Արա, Արթիւր Գրիգորեան, Ալլա Լեւոնեան, Աշոտ Ղազարեան, Լեւոն Ալահվերտեան, Գոհար Գէորգեան, Վարդուհի Վարդանեան, նաեւ՝ Հայաստանի «ճագ» նուագախումբը եւ Սերժ Պողոսեանի, Վարդան Գէորգեանի եւ Տիգրան Մանոյեանի պարախումբերը:


Պար, երգ, ամուսնք, նկարներու եւ ժապաւէններու ցուցադրութիւն կազմեցին տօնակատարութեան ընդհանուր պատկերը, որուն աւարտին հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի վարչութեան ատենապետ Թոմիկ Ալեքսանեան շնորհակալութեան իր խօսքերուն հետ ներկայները հրաւիրեց զօրավիզ կանգնելու կազմակերպուելիք դրամահաւաքի աշխատանքին:

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէն կը խնդրուի ծանուցումը բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

# ԲԱՐԻ ՅԻՇԵՆՔ ՀԱՅՐ ԳԱՐԵԳԻՆԸ

(ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԵՐԱՓՈՒԻ ԾՆՆՆԵԱՆ 70ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՈՊ Կ ԵՍԵՐՈՊ ԱՐԵ. ԱՅՃԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԽՍԻՆ, 23 ՕԳՈՍՏՈՍ 2002ԻՆ, ԵՐԵՎԱՆ)



Գարեգին վեհափառը 20րդ դարու երկրորդ կեսի հայ կեանքի ամեննախնային շքեղ և փայլուն անձնավորություններից մեկն էր, իմաստուն, խոհեմ, զգաստ, հեռատես, դիւանազան անձնավորություն, ըլլալէ եւ մնալէ յետոյ՝ հմուտ աստուածաբան, հոգեւորական, եկեղեցական մեծ գործիչ, հաւատարմ քրիստոնէս, ուսուցիչ, փայլուն հեղինակ, գրասէր և գրագէտ հայրապետ, բազմազան գիտնական, առաջնորդ, հայ լեզուի ոսկերիչ: Իր այս բոլոր շնորհներով իրեն համար Հայ Եկեղեցին փոքր էր: Ասոր համար ինք դարձաւ ճառագայտուն անձնավորություն մը համաշխարհային մակարդակի վրայ եւ հանդիսացաւ աշխարհի մէջ ամենէն շատ ճանչցուած հայերէն մէկը: Ռահ-վիրայ եղաւ տարբեր եւ տարբեր ճակատներու վրայ, որովհետեւ ինք ուր որ եղաւ, ինչ որ ըրաւ՝ իրագործեց խորունկ հաւատքով եւ ամեննախնայ կերպով: Ինք փայլուն աշակերտ էր եղած Անթիլիասի ոսկերիչներից մէկը: Դարձաւ Դպրեվանքի տեսուչ, դարձաւ հմայի վարդապետ: Գինգ Օքսֆորդ, ուր երկուշուր կէս տարի ուսանեցաւ եւ բոլորին համար դարձաւ Արեւելքէն եկած գեղեցիկ եւ իմաստուն վարդապետը: Վերադարձաւ Անթիլիաս ու դարձաւ Ջարեմ Առաջին կաթողիկոսի մօտիկ գործակիցներից մէկը, եղաւ տեսուչ դպրեվանքի, դասախոս՝ Ամերիկեան Համալսարանի եւ ըստ ամենայնի արժեւորեց ինքզինքը: Եղաւ Լիբանանի բեմերուն գարդը, բազմաթիւ սերունդներու համար՝ հմայիչ քարոզիչը, ուսուցիչը, դաստիարակը:

Վեհափառը կազմաւորուած էր յատկապէս Գարեգին Յովսէփեանց կաթողիկոսի եւ Շահան Պերպերեանի շուրջով: Եւ կը կարծեմ, որ այս երկու անձնավորություններն էին, որ ամեննախնայ կերպով տպաւորած էին զինք եւ կազմաւորած իր անհատականությունը: Ժամանակակից հոգեւորականությունն իրեն համար օրինակներ եղած էին Երուսաղէմի Թորգոմ Գուշակեան պատրիարքը, Դերենիկ եպիսկոպոսն եւ Ջարեմ վեհափառը: Այս տիպարներու շուրջին տակ կազմաւորուած անձնավորությունը, Օքսֆորդի մէջ մշակուած միտքը, Քեսապի՝ իր ծննդավայրի ականությունները յագեցած իր հոգիին դարձուցին իւրաքանչիւր անձնավորություն, եւ միշտ մեսիակական ակնկալություններ կապուեցան իրեն:

\* \* \*

Այսօր տակաւին շատ կանուխ է գնահատելու համար զինք, իբրեւ մարդ, իբրեւ կաթողիկոս, բայց կ'ուզեմ վրձին արագ հարածներով ներկայացնել զինք իբրեւ գրագէտ, գրասէր, բանասէր, առաջնորդ եւ հայ լեզուի ոսկերիչ ոսկերիչը եւ յատկապէս իբրեւ ուսուցիչ եւ դաստիարակ:

Մարդը իր մէջ գուրաբոյ էր, աշխուժ, սրամիտ: Մակերեսային անմիջականություն մը ունէր, որ սակայն, որոշ տեղ մը կանգ կ'առնէր եւ ինք թող չէր տար, որ մարդիկ փորձեն ճանչնալ զինք իր թուն հոգեթան մէջ: Միշտ խորհուրդ մը կը պահէր իր անձին շուրջ: Երեխաներու հետ մտերիմ էր, զուարթ, աշխուժ: Ընկերային շրջանակի մէջ միշտ կ'աշխատէր ըլլալ խոսակցություններով, ղեկավարողը, առանց որ երբեք ըլլար անձնակերտ մարդ: Հոգեւորականը իր մէջ կը ներկայանար իբրեւ անկեղծ, հաւատարմ քրիստոնէս: Ան եղաւ Աւետարանի գեղեցիկ քարոզիչը, իրենն էր այն, ինչ որ Թորգոմ Գուշակեան պատրիարքը կ'ըսէր եւ կը բանաձեւէր հետեւեալ կերպով. «Կոչումի գիտակցությունն է, որ կը կատարելագործէ մարդը»: Այդ կոչումի գիտակցությունն էր, որ զինք տարաւ միշտ զէպի կատարելությունը, զէպի ոգեկանությունը եւ ինք յաջողեցաւ մարդիկը Աստուծոյ բերել, զիրենք ամեննախնայ Աւետարանի կենդանի ռուրը: Իբրեւ հոգեւորական եւ ազգային գործիչ, եղաւ նախաձեռնող, ազգասէր հայրապետ: Ինքը ազգին համար պատրաստ էր շատ մեծ գոհողություններու, միայն թէ այնպէս չ'ըլլար, որ իր հաւատքը, հոգեւորականի իր գիտակցությունը եւ արժանապատուությունը գոհունէր:

Գարեգին վեհափառը եղաւ մեծ աստուածաբան: Մեր վերջին յիսուն տարիներու ընթացքին մատի վրայ համրուող աստուածաբաններէն եղաւ, թերեւ ամեննախնայ ժողովրդականը: Այն, որ կրցաւ Շնորհալիին նման, ամեննախնայ խորունկ եւ բարդ ճշմարտությունները արտայայտել պարզազգայն եւ գեղեցկազգայն ձևով: Անշուշտ ունէինք եւ ունինք աստուածաբաններ, որոնք սակայն չոր են կամ ձեւով մը իրենց բերեղեցի զղեկակն մէջ են պարփակուած: Բայց Գարեգին կաթողիկոսը երբ կը խօսէր Հայ Եկեղեցու մասին եւ կը քարոզէր Հայ Եկեղեցու ճշմարտությունն էր, կը բացատրէր Հայ Եկեղեցու աստուածաբանությունը՝ Աստուածածնի անձը, Քրիստոսի անձը, Աստուծոյ բնությունը, մարդու բնությունը, այս բոլորին մէջ պարզություն մը կը դնէր եւ մատչելիություն մը կը տար, որով պարզ ընթացքով կամ համեստ կրթություն տէր անձնավորություններն ալ կրնար լսել եւ հասկնալ զինք: Իբրեւ աստուածաբան իր ամեննախնայ մեծ գործերէն մէկը եղաւ այն աւարտաճառը, որ գրեց «Հայ Եկեղեցու աստուածաբանությունը ըստ հայ շարականների» նիւթին շուրջ, որ դժբախտաբար ցարդ կը մնայ անտիպ: Անգլերէնով ունեցաւ կարեւոր հրատարակություններ, որոնցմէ մէկը՝ «Հայոց Եկեղեցին եւ Քաղկեդոնի ժողովը», դարձաւ դասագիրք եւ է ու կը մնայ վերջին հարիւրամեակի հայկական աստուածաբանական ամեննախնայ արժեքաւոր գործերէն մէկը: Ինք բազմաթիւ լեզուներով հրատարակեց աստուածաբանական եւ հայրաբանական գործեր, եւ յատկապէս Հայ Եկեղեցին օտարներուն ծանօթացնելու կոչուած հատորներ: Իբրեւ քրիստոնէս, Եկեղեցիներու միությունների համատեղ անձ, ինքը եղաւ ռահվիրայ մը:

Գրագէտ էր Գարեգին վեհափառը, գրագէտ այն իմաստով, որ իբրեւ հոգեւորական, իբրեւ քարոզիչ, բնական է՝ որ գրող ըլլար, բայց ինք անդրանցաւ այդ հանգումները եւ չեղաւ միայն քարոզիչ մը կամ աստուածաբան մը, այլ դարձաւ նաեւ հայ լեզուի ծառան, հայ մշակույթի ծառան, եւ իբրեւ գրող գրագէտ ալ ուզեց ճանչցուել, գնահատուիլ եւ սիրուիլ ալ, եթէ կ'ուզէք: Փորձեր ըրաւ, գրեց, եւ իսկապէս հաճոյք էր իրեն, երբ իր ստորագրությունը կ'երեւէր, ըսենք, «Բագին» կամ «Ահեկան» անագիրներուն մէջ: Եւ իբրեւ մտաւորական, յատկապէս իբրեւ գրագէտ ան կ'առնէր դրուագներ, զէպեր, հայոց պատմությունն էջեր, կամ ալ երբեմն ուրիշներու կողմէ աննշար անցած, փոքրիկ երեւոյթ մը եւ այդ կը վերածէր գրական էջի մը:

Գրասէր էր վեհափառը բաւին բովանդակ առումով: Գէթ հայ իրականություն մէջ չեմ ճանչնար ես ոեւէ աշխարհական կամ եկեղեցական անձ, որ այնքան կապուած ըլլար զիրեն: Գիրքը իրեն համար պաշտամունքի առարկայ էր, եթէ կ'ուզէք, կը սիրէր Գիրքը, ինչի մասին ալ որ ըլլար եւ ուր որ երթար, որ քաղաքը որ այցելէր, կարճէք աղօթքէն յետոյ իր առաջին գործը կ'ըլլար գրատուն մը վրայ տեղի: Կ'երթար, ժամերով կը յամենար, դարակներուն մէջ կը խորասուզէր տեսած եմ զինք Փարիզ, տեսած եմ Լոնտոն, տեսած եմ զինք Թորոնթո, Շիքագո, Մոնթրէալ, Լոս Անճելես կամ Նիւ Եորքի աստուածաբանական գրախանությունները, ուր որ կը մտնէր, կը պարտէր, կը կարողանաւ զիրքը կը հաւաքէր, հոգ ալ չէր ընէր, թէ որքան ծանր պիտի ըլլան, փոխադրումը ինչպէս պիտի ըլլայ: կը հաւաքէր, եւ հիանալիին այն էր, որ կը կարողար, կը կարողար եւ ամենահեռավոր շրջաններուն մէջ, ուր որ ապրած էր, ըսենք, Նոր Զուգա կամ Անթիլիաս, նոյնիսկ պատերազմի տարիներուն, կամ Հայաստան, ուր որ եղաւ, ամեննախնայ եւ այժմեական գիրքերը իր տրամադրություններով տակ էին: Գիրքերը կը արժանանալ զիրքին մէջ կ'արձանագրէր կարեւոր մտածումներ ու օրը կու գար, ժամը կու գար, երբ որ դասախոսություններ մը ընթացքին, բարձր ընթացքին ինք գեղեցիկներն կը մէջընդմեջ մտածումը եւ այդ մտածումին կու տար նոր կեանք, նոր թռիչք:

Եւ, վերջապէս, վեհափառը նաեւ հայ լեզուի ոսկերիչ էր: գեղեցիկ բառեր, գեղեցիկ արտայայտություններ իրեն հաճոյք կը պատճառէին, չէր գոհանար եղած բառամբ:

Թերեզով, չէր գոհանար մտածումի կոկոխած հուններէն ընթանալով, միշտ գեղեցիկին, բարձրին հետամուտ էր, եւ երբեմն գոհ կ'ըլլար այս ճիգին, եւ ոլորապտոյտ նախադասություննք մէջ կրնար կորսնցնել իր ընթացքը, բայց միշտ կը ջանար գեղեցիկին սպասարկուել ըլլալ: Ասոր մէջ իրեն նպատակ էին հայ բանասիրություններ իր խոր ծանօթությունը, հայ մատենագրություններ իր խոր հմտությունը: Խորենացի կամ Եղիշէ, Կորիւն, Յովհաննէս Պատմաբան, Շնորհալի, Լամբրոնացի, Տաթեւացի, այս բոլորէն ինք քաղած էր, ջանասէր մեղուի նման ամեննախնայ համեղ արտայայտությունները, բառերը, դարձուածքները եւ իր խօսքերը կը համեմէր մեր հայրենու խօսքով, մտածումներով:

Ինք ծանօթ էր նաեւ միջնադարեան գրականություններ եւ մեր արդի գրականություններ իր պաշտած գրողներէն էր Վահան Թէքէյանը, Վարուժանը, Իսահակեանը կամ նորագոյն բանաստեղծներէն Մուշեղ Իշխանը, Պարոյր Սեւակը, Համո Սահեանը, Կոստան Ջաբահյանը, Արքայազմ Ալիքեանը, Վահէ Օշականը: Իրեն մեզի անձնօթ գրողներ կային, բայց ինք արդէն իսկ ճանչցած էր գանոնք, եւ առիթ որ ըլլար, կը գնահատէր, կ'ապրեցնէր գանոնք: Յետոյ, իր լեզուին գործածությունը ուրիշ ճիւղերէն ունէր: Վերջըս առիթ ունեցող ընթացքով յորդուած մը իր լեզուին իմացությունները մասին, եւ այդտեղ հաճոյքով կարողացի վերլուծումը եւ ուսումնասիրությունը այդ հայաստանեան հեղինակին, որ կ'ըսէր, թէ չուրէ հազար նորարարություններ ունի Գարեգին վեհափառը հայերէնի մէջ, նոր անձնուներ, նոր բարդություններ, ըսելու նոր կերպեր, բառեր ու շեշտաւորումներ, բառաստեղծումներ: Վստահ եմ, որ, վաղը երբ ուսումնասիրուին տանք եւ քիչ մը աւելի տարածուին, պիտի ճիւղացնեն հայ լեզուի գանձարանը, հայ լեզուի բառարանը:

Բայց այս համապատկերը լման պիտի չըլլար, եթէ չներկայացնէին Գարեգին վեհափառը իրեն ուսուցիչ ու դաստիարակ, եւ յատկապէս իբրեւ Հայր Գարեգին:

Եթէ մենք փորձենք ամփոփել Գարեգին Ա. վեհափառին ուսուցչական, կրթական, դաստիարակչական գործունէությունը, չ'մոռցնել թիւերու առջեւ պիտի կանգ առնենք:

Ինք որ հազիւ 67 տարի կեանք ունեցաւ, անոր 50 տարին՝ սկսած իր սարկաւազություններ օրերէն եւ Անթիլիասի Մեսրոպեան վարժարանի ուսուցչական գործունէությունն էր, նուրից կրթություն: Ուսուցանեց, քարոզեց, քաջալերեց, պատմեց, գրեց, ապրեցաւ իբրեւ ուսուցիչ: Իր կենդանաւ հոգեւոր գործունէությունն ամբողջ ընթացքին, վեհափառը երբեք չզարգեցաւ ուսուցչի ըլլալէ:

Հայր Գարեգին: Մեր ամենսիրած անձնավորություններ մեր ուսուցիչ Հայր Գարեգին էր: Վեհափառը ինձ ուսուցիչ եղաւ Պէյրուսի Մ. Նշան վարժարանին մէջ, ուր մեզի կը դասաւանդէր հայոց պատմություն եւ քրիստոնէական բարոյագիտություն: Դպրեանքի մէջ մեզի ուսուցչը Հայ Եկեղեցու պատմություն, աստուածաբանություն, հովուական աստուածաբանություն: Շատ աշակերտ ունեցաւ ան, Դպրեվանք, Պէյրուսի Հ.Բ.Ը.Մ. Գարուհի Յակոբեան վարժարան, Պէյրուսի Համազգայինի ճեմարան, Ամերիկեան Համալսարանի եւ Գէորգեան հոգեւոր ճեմարան: Արեւայուրությունն էր մինչեւ կաթողիկոսությունն ան եղաւ ու մնաց ուսուցիչ բառին ամեննախնայ ազնուական եւ մարդկային իմաստով: Բայց ես կը հաւատամ, որ իր ամենսիրած նիւթը Հայ Եկեղեցու պատմությունն էր եւ եթէ պատահեցաւ որ կարգ մը դասախոսություններ ըլլար գիշեր ուրիշներու միշտ իրեն վերապահեց հայ եկեղեցու պատմության նիւթը եւ այնպիսի ոգիով, այնպիսի սիրով կ'ուսուցանէր, որ այժմուցեցաւ մեզ անհուն սիրով կայելի հայ եկեղեցիներ: Այն իրականությունը որ մեզ միշտ աշակերտ նկատեց՝ տարբեր բան մեզմէ ոմանք կը նեղուէին ատկէ, ուրիշներ յարգանքով կ'ընդունէին այդ, բայց Գարեգին վեհափառը բոլորին համար միշտ ալ մնաց ուսուցիչ, եւ իբրեւ ուսուցիչ մեզի համար ինք միշտ Հայր Գարեգինի պատկերով ալ մնաց մեծացաւ ինք, մեծ դէմք հանդիսացաւ, եպիսկոպոս, կաթողիկոս դարձաւ, Հայ Եկեղեցու պատմությունն էր ճանդիսացաւ այն առաջին անձը, որ կ'իլիկիտ Աթոռէն բարձրացաւ Մ. Խնթիանի գաւը, բայց մեզի համար ամեննախնայ գեղեցիկը, ամեննախնայ ամեննախնայ սիրելին՝ Հայր Գարեգինը մնաց: Անթիլիասի Դպրեվանքի մեր տեսուչը, մեր երագը, մեր ներշնչումի պատկերը: Ու հիմա ամսուսներով կը մղուի ըսելու, թէ երանի միշտ Հայր Գարեգին մնար:

(Շար. 1)

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏԱԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԿԻՆ ԲՈՒՄԱՐԵՆ

1959 թուականի ամրանը ուստիոյ մի խումբ անհանգիստներու որոշեցինք Արագած բարձրանալ: Ամիսն ու օրը ընտրեցինք մասնագէտ լեռնագնացների խորհուրդով: Այդ փոքրաթիւ խմբի ամենախաղաղաւոր դու էիր: Հասանք Արագածի լանջի գիւղերից մէկի արօտտեղին, գիշերելու համար վրան գարկեցինք, որպէսզի այգաբացին սկսենք վերելքը: Գիւղի տարեցները եղանակի անակնկալ փոփոխումը տեսնելով, յորդորեցին ետ կանգնել մտադրությունից: Բայց մի քանի խիզախներ յամառեցին՝ Շահէ Տատուրեան, Ջաւադ Թորոնեան, Գոհար Աճէմեան, Լեւոն Բուրաղեան եւ Ի հարկէ՝ դու: Ստորոտում մնացածներս տագնապով սպասում էինք ձեր վերադարձին: Եղանակ, իրօք, կտրուկ փոխուել էր: Սօտակայ լեռնագագաթներից սկիզբ առնող գետը պղտորւել ու յորդացել էր... Մութ էր, երբ տեղանքին քաջածանօթ գիւղացի երկու երիտասարդների ուղեկցությունեք յայտնուեցինք: Ինչ երջանուեցինք: Վերելքը յաղթահարողի հպարտութեամբ ասացիր՝ «Մնաց Արարատն»: Ամրան աղբ գիշերին ձեզինք Արագածի ձեան հոտն էր բուրում:

... Արարատ: Մեր հեռաւոր - մօտիկ լեռան հանդէպ բո սէրը հնարաւոր է, արգեօք, խօսքով արտայայտել: 1958 թուականին բնակարան ստացար Երեւանի Կոմիտաս յանահուն պողոտայի մի նորակառոյցում: Վերջապէս ընտանիքը կենցաղային անյարմար փհակից դուրս եկաւ:

- Աչքերիս չեմ հաւատում,- ասացիր,- վաղ արշալուստից մինչեւ միջնադ Մասիսն ինձ հետ է:

Մի օր էլ ուստիոյ մեր խմբագրություն մտար գունատ ու յոգած: Առաւուտ էր, փոքր ինչ անսպասելի էր գայուտայ: Պատմեցիր այդ գիշեր տեսածդ երազը:

- Կարծես իրական լինէր: Արեւածագ է. արթնանում եմ, սովորութեան հաւատարիմ դուրս գալիս պատշգամբ ու... արասալ: Արարատը չկայ: Անսահման հարթություն է, դաշտ ու երկինք ձուլուած են միմեանց: Միտաս կսկծում է: Մա ի՞նչ բան է: Ու յանկարծ շանթահարում եմ մի հրէշաւոր մտքից՝ սա մեր դարաւոր ոտքին նոր որոգայթն է: Իր պատմության քանդիչ ուժերը ի մի է բերել չստեղծ այս հարուածը մեզ հասցնելու համար: Ճիգ եմ անում տնեցիներին կանչել, որ գան-տեսնեն այս նոր Շիրունը: Ժայնս դուրս չի գալիս ու... գարթնում եմ: Քրտինքի մէջ կորած եմ:

Մեք անհոգ քրթիկով ընդունեցինք պատմածդ:

- Այ թէ երեւակայությունն ունես:

- Միայն դու կարող էիր նման երազ տեսնել...

Թէ եւ ներդաժառանգ ժպտում էիր, բայց պարզ երեւում էր, որ դեռ սահմաններցի երազ էր հետ ես: Գիտես՞, Յովհաննէս, որ օրեր առաջ 1994 թուականին լոյս տեսած ուսակական ամսագրերից մէկում մի պատմուածք կարդացի: Հեղինակը՝ Գոհար Մարկոսեան կասկած, բժշկագիտութեան թեկնածու է, ստեղծագործում է ուսերէն, ապրում է Թալինում: Նրա վկայելից երկուրը թարգմանուած են Եւրոպայի մի շարք լեզուներով: Վերադառնալով պատմութեան քննիչ կարգին վերադառնի տասնամեակներ առաջ տեսածդ երազը, մեր անհոգ ծիծաղն ու մեր խօսքերը՝ «Յովսէփ միայն դու՛ կարող էիր նման երազ տեսնել»: Ինչպէ՞ս եք սխալուել, սիրելիս: Ան այդ հայուհու պատմութեանք՝ երկու խօսքով:

... Մի առաւուտ երեւակները արթնանում են եւ տեսնում, որ Մասիսները չկան: Ահաւոր իրողություն մէկից միւսին է անցնում: Ժողովուրդը՝ քաղաքներից, գիւղերից, թողած տուն ու տեղ, ով ինչպէս կարող է՝ հետիտան, ատումբեքներով կուտակում է Արաքսի ափին: Վեհապառն լեռը չկայ ու չկայ: Թուրքերը: Այ՛ո: Սակայն ինչպէ՞ս են վերացրել: Հնարաւոր է, արգեօք: Արեւային, տոթակէզ այդ օրը հազարաւոր հայեր մուտագած յոգնություններն ու ծարաւ, հայեացք սեւեւած Արաքսի հակադիր ափին՝ տեսնողահար սպասում են: Ի՞նչ անել: Եւ իրիկանուտի կատարում է հրաշքը. ուխտաւորներն արագ տառապած մարմինը կենդանանում է, այլեկոծուած հոգիին յայտնում: Հորիզոնում գծագրում է աստուածաշնչեան լեռն իր ողջ վեհությունները:

Տեսնում ես, Յովհաննէս, ի՞նչ հոգեհարազատությունն քո երազն է մեր ուսակիր հայրենակցուհու պատմութեան միջեւ: ... Դուրս է գալիս, որ իւրաքանչիւր հայ իր արեան հետ որպէս պարգեւ ժառանգում է նաեւ Արարատի՝ ուժ ուսող, զօրացնող պատկերը, եթէ նոյնիսկ չգիտի մայրենին, եթէ անգամ չի տեսել Արարատը:

... Ես ի՞նչ տեսաւ աշխարհում, երբ Մասիսը տեսայ:

Հեռուներում ծնուած, արաբական երկրներում իր կեանքն անցկացրած ազնուական հայի՝ Մուշեղ Իշխանի այս մորմուքը լիչենք:

«... Արարատը լուսաւորութիւնը կանոնաւորող մեծ հայելի է Գմաց: Արարատը կենտրոն է ու Գմացի: Նրա զարգացր հայ եկեղեցու գմբէթի հետ քայլեց աշխարհի վրայով», - լիչենք նաեւ մեծ մտածողի՝ Կոստան Ջաբահյանի այս խօսքերը: Մերությունն հասակում Արարատի ձգողական ուժը չէ՞ր նաեւ, որ նրան Հայաստան բերեց:

Քո ձայնն էլ է, Յովհաննէս, հնչում ականջումս՝ Եղիշէ Ջաբահյանի խօսքերով:

«... Որպէս անհատ փառքի Գմացի, ես իմ Մասիս սարն եմ սիրում»: Արարատը եղել է ու կայ: Կայ՝ մեր յիշողութեան խորերում թաղուած, դարձր զանցող չեղտեր գորություն: Այս ամենով հանգերձ, մշտապէս մեզ հետ է Արարատի կորուստ տալանակ, հայի համար այդ ամենաթանկագինից, հայի հոգեկեանից չզատուող այդ անբաժանելից գրկուելու, մեր հանգիստը խորհող այդ կեղեքից տագնապը, որ պլլում է մեր սրտին, մեր ուղեղին...

Բայց իբրեւ հակադէպ, ուր էլ լինենք, մեր գլխավերելու սաւառնող Ուղեցոյց Աստղը Արարաչէ շուրջը թաղ պատգամում է: «Արարատը կայ յ, Գրայ լինելը բացառուած է, Գրայ՝ մեզ չպատկանելը միամտում ու սին է: Արարատը հայի յաւերժութեան յորհրդակցից է, հայի ծննդեան վկայակամը, հայի արեան բաղադրիչը, ուր էլ ծնուած լինի Գ, ինչ լեզուով էլ խօսի»:

ԱՐԵՒԿ ԱՐԱԳԵԱՆ  
«Հայաստանի Հանրապետութիւն»

# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂՈՒՄ

Լիբանանյան կեանքի երեւոյթներ

ՊԵՅՐՈՒԹԻ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՐԳԻԼԵ ԱՆՈՆՅ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

## ԵՐԲ ՄՈԹՈՐՍԻՔԼԵԹՆԵՐՈՒ ԲԱՐԻՔԸ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ԶԱՐԻՔԻ...

Վերջին տարիներուն լիբանանեան մայրուղիներն ու փողոցները խճողող ինքնաշարժներուն եւ հանրային փոխադրակառքերուն կողքին մեծ աճ արձանագրեցին զանազան տեսակի մոթորսիքլեթները:

Այսօր գրեթէ անկարելի է քաղաքի Լիբանանի եւ յատկապէս Պէյրուսի փողոցներէն, առանց քանի մը մոթորսիքլեթի հանդիպելու: Անոնց թիւը աներեւակալօրէն արագութեամբ բազմացաւ եւ անոնք սկսան գործածուել տարբեր նպատակներու համար:

Պէյրուսի մէջ մոթորսիքլեթներու գործածութիւնը զգալիօրէն աւելցաւ փոխադրամիջոցներու եւ յատկապէս պենզինի սղուծեանէն ետք: Օրական որոշ գումար մը փոխադրութեան մսխելու փոխարէն, քաղաքացիներ եւ յատկապէս երիտասարդներ նախընտրեցին այդ գումարը հաւաքել եւ նուազ ծախսով անձնակա մոթորսիքլեթ մը ունենալ:

Օրին, մոթորսիքլեթներու օգտագործման յատուկ օրէնքներ եւ կանոններ չմշակուեցան եւ, ինչպէս միշտ, մեծ թիւով մոթորսիքլեթներու վաճառքէն եւ գործածութենէն ետք, կառավարութիւնը ուզեց համապատասխան օրէնքներ որդեգրել: Ըստ լիբանանեան սովորութեան, որոշ ժամանակի համար հետապնդուեցան օրինազանցներն ու առանց արտօնագիրի քրոնները: Սակայն, ինչպէս քաղաքացիները լիբանանցիներն, այդ օրէնքները կ'որդեգրուին եւ կը գործադրուին կարճ ժամանակի համար: Ասոր լաւ ծանօթ ըլլալով քաղաքացիներէն ոմանք նոյնիսկ չորհեցան իրենց մոթորսիքլեթները արձանագրելու կամ անհրաժեշտ թուղթերը ամբողջացնելու, այլ՝ պարզապէս այդ շրջանին անոնք դադրեցան մոթորսիքլեթ գործածել: Ճշդուած ժամանակի աւարտէն ետք, երբ կառավարութիւնն ու իշխանաւորները իրենց ուշադրութիւնը ուղղեցին այլ կողմ եւ համապատասխան գինուորական ուժերը դադրեցան հետապնդել, օրինաւոր եւ անօրէն ձեւով մոթորսիքլեթ քրոնները կրկին ողողեցին փողոցները եւ կրկնապատկեցին իրենց թիւը:

Անշուշտ, կը պատահի, որ արագակալ ուժերը հազուադէպօրէն, ըստ զուգահիստութեան, վերջինքն անօրէն ձեւով ճամբայ ելած անձերը եւ ցերեկներն ու յատկապէս գիշերները փողոցներուն մէջ անցարգելներ հաստատեն, սակայն ոչ մէկ հնարք կրնայ ծուղակը ձգել լիբանանցի վարորդները, որոնք հազիւ անցարգելը տեսած՝ մեծ վարպետութեամբ խոյս կու տան եւ իրենց ճամբան փոխելով առանց մեծ դժուարութեան կը շարունակեն իրենց ճամբան...

Մոթորսիքլեթի առեւտուրով զբաղող վաճառականի մը համաձայն, ինք առանձինն տարեկան 1500 մոթորսիքլեթ կը ներածէ եւ շատ դիւրութեամբ կը սպառէ: Ան կ'ըսէ, թէ մոթորսիքլեթները նախապէս աւելի մեծ համեմատութեամբ կը ծախուէին պարզ քաղաքացիներուն, իրենց անօրէն գործածութեան համար, սակայն վերջին շրջանին շատցած են խանութներուն, ճաշարաններուն եւ հաստատութիւններուն համար վաճառուող մոթորսիքլեթները: Անոր համաձայն, գնողներուն տարիքը ընդհանրապէս կը տարուբերի 18էն 30ի միջեւ:

Լիբանանի մէջ մոթորսիքլեթները կ'օգտագործուին գլխաւոր երկու նպատակի՝ մարզոց փոխադրութեան եւ յաճախորդներուն պարանք հասցնելու համար: Մեծ է թիւը այն քաղաքացիներուն ու յատկապէս երիտասարդներուն, որոնք գործի կ'երթան մոթորսիքլեթներով. ըստ անոնց, այս միջոցով փոխադրութիւնը, խճողումներու տաղտուկէն հետո՝ արագ, հանգիստ ու նուազ ծախս կ'ենթադրէ:



Վերջին շրջանին, սակայն մոթորսիքլեթները սկսած են լուրջ հարցեր ստեղծել:

Փոքր ձեւակալով, շատ տեղ չբռնող, ինքնաշարժներուն մէջէն դիւրութեամբ փախչող, բաւական արագ եւ մատչելի ծախս ենթադրող մոթորսիքլեթները իսկապէս կը դիւրացնեն քաղաքացիին կեանքը եւ կ'արագացնեն առեւտրականներու եւ ճաշարաններու աշխատանքները: Սակայն, անոնք սկսած են



գործածուել գողութեան համար եւ երիտասարդներու կողմէ իրենք մահապիւժ գուարձարք: Այս պատճառով, 13 Օգոստոսի իր նիստին, Պէյրուսի քաղաքապետութիւնը իր թիւ 358 որոշումով մայրաքաղաքին մէջ արգիլեց երկու անիւով մոթորսիքլեթներու գործածութիւնը 1 Հոկտեմբերէն սկսեալ: Այս որոշումը արուեստը նկատի ունենալով գլխաւոր երեք երեւոյթներ՝ ժողովուրդին պատճառած նեղութիւնը, կատարուած գողութիւնները եւ անոր սպառնացած վտանգը:

Պէյրուսի մէջ մոթորսիքլեթ քրոնները չեն ընդունիր, որ իրենք եւս ինքնաշարժներուն եւ փոխադրութեան համար ճշդուած օրէնքներուն եւ կանոններուն ենթակայ են: Անոնք կը քշեն հակառակ ուղղութեամբ, առանց սխալ գալու, առանց նախազգուշացումի կը յայտնուին ինքնաշարժներու դիմաց եւ վտանգ կը սպառնան ոչ միայն իրենց, այլ նաեւ՝ դիմացի վարորդներուն եւ անմեղ քաղաքացիներուն: Գողութիւնը եւ քաղաքներուն ուսերէն պայտասակները քաշելը սկսած են կատարուել մոթորսիքլեթներու միջոցով, որովհետեւ անոնք ամբողջովին կը համապատասխանեն այդ «աշխատանք»ի պահանջին: Մայրաքաղաքի եւ զբօսաշրջային զանազան կեդրոններու մէջ կը վիտան մոթորսիքլեթով շրջան ընող երիտասարդներ, որոնք յանկարծ անջատաբար կամ խուճաբերով կը յայտնուին քաղաքներու դիմաց ու կը խլեն անոնց ուսէն կախուած պայուսակը ու կ'անհետանան: Անոնք նոյնիսկ կը փորձեն վնաս հասցնել եւ դանակով մը վիրաւորել անցորդը, եթէ վերջինը որեւէ ձեւով փորձէ դիմադրել: Այս տեսակի խուճաբեր, ըստ պատասխանատուներուն, կը հետապնդուին արագակալ ուժերու կողմէ, որոնք սակայն միշտ չէ որ կը յաջողին գտնել խուճաբի անգամները եւ կասեցնել անոնց գործունէութիւնը: Հարցումը կը մնայ հարցում, արդեօք գողներու խուճաբերը շատ ճարպիկ են, թէ պատճառական ուժերը պէտք եղած արթնութիւնը չունին: Կան նաեւ խուճաբեր, որոնք իրենց նախասիրութիւնը դարձուցած են գիշերները մոթորսիքլեթներով թափառել, մրցիչ, ցուցադրութիւնները ընել եւ սուրբ մայրուղիներուն վրայ: Անոնք ահալու աղմուկ ու իրարանցում կը յառաջանեն, երբ կը սկսին իրենց «զուարճութեան» եւ գիշերները չափազանց նեղացուցիչ աղմուկ բարձրացնելով կը սուրան ու կը պոստեն: Անոնք եւս ենթակայ են հետապնդումի, սակայն... ամէն գիշեր կը մնան լիբանանցիներուն եւ յատկապէս մայրուղիներուն մօտերը բնակողներուն մղձաւանջը:

Գիշերային կեանքը սիրող երիտասարդներու համաձայն, իրիկնային այս արկածախնդրութիւնները շատ կարեւոր են իրենց համար, որովհետեւ անոնք «կ'իմաստաւորեն» ու «կը հարստացնեն» զիրենք: Ըստ անոնց, մոթորսիքլեթով խաղերը կու տան զօրաւոր ըլլալու զգացում, անկարագրելի հաճոյք, արագ եւ սուրացող ընթացք՝ հովուն դէմ... «Այս մէկը նախասիրած բանս է, առանց անոր չեմ կրնար ապրիլ», կ'ըսէ անոնցմէ մէկը: Սակայն սակա մետային մէկ կողմն է: Մետային միւս կողմը աղմուկէն տառապող քաղաքացիներն են, որոնք կը սարսափին իրենց բռնն ու հանգիստը խանգարող գիշերային այս արկածախնդրութիւններէն:

Զամենայնդէպս, որոշումը որքան ալ տրամաբանական եւ զոհարարցի պատճառներով տրուած ըլլայ, անիկա բողոքի մեծ ալիք մը յառաջացուց վաճառատուներու եւ ճաշարաններու սեփականատէրերուն մօտ, որովհետեւ անոնց մեծամասնութիւնը այսօր իր գործերը կը դասաւորէ եւ ծառայութիւնները կը մատուցէ անվճար դրութեամբ մը, որ կը կատարուի մոթորսիքլեթներով շրջող երիտասարդներու միջոցով:

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

## «ԱՉԴԱԿ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՑԱՆՔԻՆ ԱՐԴԻՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ինչպէս ծանօթ է, «Ազդակ» 22 Յուլիսէն 19 Օգոստոս կազմակերպեց 25 հարցունքներ բաղկացած ընդհանուր զարգացման մրցանք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին մեծաթիւ ընթերցողներ, որոնցմէ 10ը միայն յաջողեցաւ ճիշտու 80 առ հարիւրէն աւելին պայտահովել (46 միլ):

Ստորեւ՝ ցանկը առաւելագոյն 10 ճիշտ պատասխաններ ընթերցողներուն: Յակոբ Տէր Ղուկասեան (46 միլ), Սասուն Սարգիսեան (48 միլ), Արիս Գալուստեան (49 միլ), Սագո Գասպաեան, Գեորգ Նաչաւուրեան, Ղրո Սարլեան (54ական միլ), Սարգիս Բարմաքաղեան, Նանոս Բարմաքաղեան, Լոռի Բարմաքաղեան (55ական միլ), Լորիկ Սալուստեան (56 միլ):

Շեռեաբար, մրցանքին բարձրագոյն ճիշտ կ'ապահովէ եւ «Ազդակ»ի կողմէ տրամադրուած 500,000 լ. ոսկիի նիւթական պարգևին կ'արժանանայ Լորիկ Սալուստեան: Ենթակայէն կը խնդրուի պարգևը ստանալու համար «Ազդակ»ի խմբագրատուն ներկայանալ Երկուշաբթի, 2 Սեպտեմբերին:

### ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՑԱՆՔԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

- 1.- Ո՞վ է «Ցեղասպանութիւն» եզրին հեղինակը:
  - Ռաֆայէլ Լեմբին:
- 2.- Ո՞ր երկիրը առաջին անգամ ճանչցած է Հայկական Ցեղասպանութիւնը. ե՞րբ (օր, ամիս, տարի):
  - Ուրուկուէյ, 20 Ապրիլ 1965:
- 3.- Քանատայի Մերակոյտը ե՞րբ ճանչցաւ Հայկական Ցեղասպանութիւնը (օր, ամիս, տարի):
  - 13 Յունիս 2002ին:
- 4.- Ե՞րբ հիմնուած է Միջմշակութեան թանգարանը (տարի):
  - 1995:
- 5.- Նախագահ Քոչարեան Հայկական Ցեղասպանութիւնը առաջին անգամ ե՞րբ արձարծեց ՄԱԿի միջազգային ամպիոնին մէջ (օր, ամիս, տարի):
  - 25 Սեպտեմբեր 1998ին:
- 6.- Ի՞նչ կը կոչուին Ամբրիկայի եւ Բրիտանիոյ գրական մեծագոյն մրցանակները:
  - «Փուլիցըր» եւ «Պուլքըր»:
- 7.- Հայկական Ցեղասպանութեան վերապրած վանեցի երիտասարդ մը գաղթած է Միացեալ Նահանգներ, փոխած է իր անունը եւ դարձած է ամերիկեան արդի գեղանկարչութեան ուսուցիչներէն մէկը: Ո՞վ է ան եւ ի՞նչ կը կոչուի անոր ամէնէն հռչակաւոր գեղանկարը, որ կ'ոգեկոչէ Ցեղասպանութիւնը:
  - Արշիլ Կորքի, «Տիարքիսք Էմմ Ռիք մատըր» («Արուեստագետը եւ իր մայրը»):
- 8.- «Ինքըրնէշընը» Հերբլտ Թրիպիոնը օրաթերթի արուեստի բաժնի խմբագիրն է: Կը կրեմ հայու անուն եւ մակնուն: «Ազդակ» օրաթերթին մէջ թարգմանաբար լոյս կը տեսնեն ընդհանրապէս այն յօդուածներս, որոնց մէջ որոշ սկսնակներ կան հայկական մշակոյթին: Ո՞վ է ան:
  - Սուրէն Մելիքեան:
- 9.- Որո՞նք են աճուրդի աշխարհահռչակ երկու վաճառատուները:
  - «Արքիպի» եւ «Քրիսթի»:
- 10.- Այս տարի Ֆրեյնդսի մէջ տեղի ունեցաւ ամերիկահայ անուանի գրագէտ Ուիլիլմ Սարոյեանի գեղանկարչական գործերուն նուիրուած ցուցահանդէս մը եւ համերգներ: Ֆրեյնդսի ամէնէն հռչակաւոր թերթը մանրամասնօրէն անդադարաւ փառասունին եւ «Ազդակ»ի մէջ լոյս տեսան յատկանշական թղթակցութիւններու թարգմանութիւնները: Ի՞նչ կը կոչուի այս թերթը:
  - «Տը Կերթոն Պի»:
- 11) Ո՞ր թուականին կատարուած է Միջին Սփիւլըրի «Ի. Թի. Տը Էքսթրա Թերթսթրիբլ» ժապաւէնին առաջին արտադրութիւնը:
  - 1982
- 12) Ո՞ր ժապաւէնը տիրացաւ 2002ի լաւագոյն օտար ժապաւէնի «օսքար»ին:
  - «Նօ Մէք Լէքս»:
- 13) Հայկական ո՞ր ժապաւէնը առաջին անգամ ըլլալով միացաւ «օսքար»ներու թեկնածու ներկայացող հաւանական ժապաւէններու ցանկին:
  - «Լոուրեան Զայն»ը:
- 14) Պաղեստինցի ո՞ր բեմադրիչը Քանի փառասունին պարզեւատրուեցաւ դատական կազմի մրցանակով:
  - Էլիա Սիլվեյման:
- 15) Վերջին ամիսներուն լիբանանեան սրահներուն մէջ ցուցադրուած ո՞ր ժապաւէնը կը ներկայացնէ Լիբանանի քաղաքացիական պատերազմէն պատկերներ:
  - «Սիւյ Կէյմ»:
- 16) Տո՞ւր Հայկական Ցեղասպանութեան նուիրուած չորս կայքերու անունները:
  - www.armenian-genocide.org
  - www.24april.org
  - www.theforgotten.org
  - www.armeniangenocide.com
  - www.armeniangenocideGBnet
- 17) Համակարգիչները իրարու կապելով տեղեկութիւններ փոխանակելու դրութեան ստեղծուած ո՞ր երկրի կառավարութեան նախաձեռնութիւնը եղած է: Համացանցի «նախահայրը» նկատուող այդ ցանցը ի՞նչ կը կոչուէր:
  - Միացեալ Նահանգներ, «Արփանէթ»:
- 18) Տո՞ւր փնտուտի մեքենաներու (search engine) երեք կայքերու հասցէները:
  - www.google.com
  - www.altavista.com
  - www.yahoo.com
  - www.lycos.com
- 19) Ո՞վ է «Մայքրոսոֆթ» ընկերութեան հիմնադիրը:
  - Պիլ Կէյթս:
- 20) Ի՞նչ կը կոչուի «Մայքրոսոֆթ» ընկերութեան հրապարակած ելեկտրոնային համայնագիտարանը:
  - «Ինքըրնէթ»:
- 21) Ի՞նչ կը կոչուի Հրատ էջը կատարած առաջին անջրպետագնացը: Ե՞րբ էջը կատարած է ան կարմիր մոլորակին վրայ:
  - «Մարս Փէքսայնտըր», 4 Յունիս 1997ին:
- 22) Ի՞նչ կը կոչուի երկրագունդին շուրջ ծիրին վրայ դրուած եւ տակաւին շինութեան մէջ եղող այն կեդրոնը, ուր անջրպետի զբօսաշրջիկներ կ'այցելեն վերջին երկու տարիներուն: Քանի՞ երկիրներ կը մասնակցին այդ կեդրոնի շինութեան:
  - «Ինքըրնէթը Սփէյ Սթէյշըն», 10:
- 23) Ինչ կը կոչուի ջերմանցի կազմուած արտաստուտներու համաձայնագիրը: Երբ կնքուած է անիկա:
  - Քիոթոյի համաձայնագիր, 1997:
- 24) Անասուններու քրոններու ճարտարագիտութեան մէջ անկիւնադաճ մը եղած է Տոլլի ոչխարին ստեղծումը: Ո՞ր տարին ստեղծուած է Տոլլի ոչխարը:
  - 1997:
- 25) 2002ի Մայիսի ՄԱԿի Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը յայտարարեց, որ երբեմն մահացու եղող հիւանդութեան մը ժահրին վերջին պահեստները պիտի չփճացուին, թէեւ այս տարի ժամկէտ ճշդուած էր անոնց փճացումին համար: Ո՞ր հիւանդութեան մասին էր յայտարարութիւնը: Հիւանդութիւնը ե՞րբ պաշտօնապէս չբացած յայտարարուած էր:
  - Մաղկախտ, 1978ին:



# Կնոջական

## ՄԵՐ ԶԱԽԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### ԻՆՉՊԷՍ ՆՊԱՍՏԵԼ ՄԱՆՈՒԿԻՆ ՈՒՂԵՂԻՆ ԱՃՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ



Բժշկական ուսումնասիրությունները կը հաստատեն, որ ծնողները կարելի էր դեր կրնան խաղալ իրենց զաւակներուն ուղեղին աճման եւ զարգացման հոլովոյթին մէջ:

Նոյն ուսումնասիրութիւններուն համաձայն, կան հիմնական հինգ քայլեր, որոնց շնորհիւ ծնողները կրնան նպաստել իրենց փոքրիկներուն ուղեղին ճիշդ եւ առողջ աճումին:

- 1 -

Սիրելի երեխան եւ գուրգուրալ անոր: Ուսումնասիրութիւնները հաստատած են, որ գուրգուրանք ստացած երեխան ապագային աւելի հաշտ յարաբերութիւններ կը մշակէ շուրջիներուն հետ, ան նաեւ աւելի դիւրին կը դիմագրաւէ կեանքի դժուարութիւնները եւ, վերջապէս, աւելի ընդունակ աշակերտ կ'ըլլայ քան գուրգուրանք չստացողները:

- 2 -

Խօսիլ երեխային հետ եւ երգել անոր: Այս երկուքը կ'օգնեն մանուկին, որպէսզի ապագային կարծիք ունենայ, արտայայտուի գիտնայ, սորվի փափաքի:

- 3 -

Խաղալ երեխային հետ: Բերել այնպիսի խաղալիքներ, որոնք հետաքրքրութիւն արթնցնեն անոր մէջ, յայտնութիւններ ընէ եւ կարենայ ինքզինք զբաղեցնել: Այս բոլորը կ'օգնեն, որ ապագային ան ինքնաբաւ ըլլայ եւ պրպտող միտք ունենայ:

- 4 -

Թող անոր կրթութիւնը դաստիարակի ըլլայ: Երեխան պէտք է իր սահմանները գիտնայ, օրէնքները յարգէ եւ գործադրէ, որպէսզի ապագային պարկեշտ եւ կարգապահ քաղաքացի դառնայ:

- 5 -

Լաւ եւ որակաւոր մանկապարտէզ մը ընտրել, որպէսզի երեխան բացի տարրական պէտքերէն եւ անհրաժեշտ գուրգուրանքէն նաեւ ստանայ լաւ դաստիարակութիւն եւ շրջապատուի ատակ անձերով, որոնք պիտի նպաստեն անոր մտային եւ ֆիզիքական առողջ զարգացման:

## ԽՈՐԱԳԻՐ

### ԿԻՏՐՈՆՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Բաղադրութիւն՝ 6 անձի համար  
200 կր. ալիւր  
2 կիտրոն  
1 նարինջ  
3 հաւկիթ  
150 կր. կարագ  
150 կր. շաքար  
1 սուրճի դգալ քիմիական թթիմոր  
Պտղունց մը աղ

## ՓՈՐՁ - ԸՆԴՅԱՐԱՆ

### ՃՇՄԱՐՏԱՆՈՐՍ ԷՔ

Իմանալու համար, թէ ճշմարտախօս էք կամ ոչ, պատասխանեցէք՝ այս փորձ - հարցարանին, ընտրելով ներկայացուած երեք պատասխաններէն յարմարագոյնը:  
Ճիշդ է, որ ճշմարտութիւնը յաճախ կը վիրաւորէ, բայց չի վնասեր սուտին նման: Ճշմարտութիւնը ըսելով մենք մեզ եւ դիմացինը կը յարգենք, կը դառնանք ընկերութեան մէջ վստահելի եւ յարգելի անձ:

- 1 -

Պատահած է, որ ձեր տարիքին մասին հարցումի մը ստէք:  
ա) Յաճախ  
բ) Մէկ - երկու անգամ  
գ) Երբեք

- 2 -

Երբ դժուարութեան մատուցէք, անկէ դուրս գալու համար ի՞նչ միջոցի կը դիմէք:  
ա) Սուտի  
բ) «ձերմակ» սուտի  
գ) Լուրթեան

- 3 -

Անհրաժեշտ տուեալները չունեցող անձի մը համար եթէ ձեր բարեխօսութեան դիմեն՝  
ա) Կը մերժէք բարեխօսել  
բ) Ձեր անկեղծ կարծիքը կու տաք  
գ) Սկզբունքը մէկ կողմ ձգելով, կը բարեխօսէք

- 4 -

Ձրոյցի մը ընթացքին ձեր տեսակէտը պարզելու ժամանակ՝  
ա) Երբեք  
բ) Մէկէ աւելի ան-

ա) Կը ձեռնարկէք, որ բազմաթիւ գիրքեր կարդացած էք այդ նիւթին շուրջ  
բ) Ուրիշներուն փորձառութիւնները կը մէջբերէք  
գ) Ձեր համեստ կարծիքը կու տաք

- 5 -

Կառավարական գրասենեակի մը մէջ բոլորին նման ձեր կարգը կը սպասէք, բայց պատասխանատուն կարգը խանգարելով նախապատուութիւնը ձեզի կու տայ  
ա) Անտեղեակ կը ձեւանաք եւ ձեր գործը կ'աւարտէք:  
բ) Պատասխանատուին ուշադրութեան կը յանձնէք, որ ձեզի առաջ ուրիշ անձ մը իր կարգը կը սպասէ:  
գ) Կը ձեռնարկէք, որ շատ երկար ժամանակ է ի վեր կը սպասէիք եւ ի վերջոյ ձեր կարգը հասած է:

- 6 -

Եթէ երեխայ մը ձեզի նեղ կացութեան մատնող հարցում մը հարցնէ՝  
ա) Անորոշ պատասխան մը կու տաք  
բ) Իրականութեան մօտեցող պատասխան մը կու տաք  
գ) Կ'ըսէք թէ նախընտրելի է, որ այդ հարցումը իր մօրը ուղղէ

- 7 -

Պատահած է, որ սուտը ըլլաք եւ զբան կամ հեռաձայնին զանգին չպատասխանէք:  
ա) Երբեք  
բ) Մէկէ աւելի ան-

- 8 -

Ո՞ր պարագային պատրաստ էք ճշմարտութիւնը ծածկելու եւ ստելու:  
ա) Երբ հարցը կը վերաբերի ձեր ընկերային դիրքին:  
բ) Երբ հարցը կը վերաբերի նիւթական դժուարութեան մը  
գ) Երբ հարցը կը վերաբերի սիրելի անձի մը փրկութեան

- 9 -

Ի՞նչ է ձեր կարծիքը «ձերմակ սուտ»ին մասին:  
ա) Չէք արդարացներ գայն  
բ) Յաճախ անոր կը դիմէք  
գ) Հազուադէպօրէն անոր կը դիմէք

- 10 -

Վերոյիշեալ 9 հարցումներուն ձեր 9 պատասխանները ուշադիր կարդացէք եւ ըսէք թէ քանի՞ անգամ ճշմարտութիւնը չըսէք:  
ա) Մէկ անգամ միայն  
բ) Մէկէ աւելի անգամներ  
գ) Ոչ մէկ անգամ

	ա	բ	գ
1	0	5	10
2	0	0	10
3	5	10	0
4	5	5	10
5	5	10	0
6	0	10	5
7	10	0	5
8	10	5	5
9	10	0	5
10	5	0	10



Ձեր պատասխանները ստուգելէ ետք հաշուեցէք ձեր հաւարած կետերը եւ կարդացէք արդիւնքը:  
● Եթէ 100 կէտ հաւարած էք, ամէն գնով նշմարտութիւնը ըսող անձ մըն էք, ճիշդ է որ մէկ - երկու բնամտութիւն շահած էք, բայց շատեր ալ կը գնահատեն ձեր ուղղամտութիւնը:  
● Եթէ 85 - 100 կէտ հաւարած էք՝ շատ անկեղծ անձ մըն էք, կարելի է ձեզի վստահիլ եւ ապաւինիլ ձեր արդարամտութեան:  
● Եթէ 60 - 85 կէտ հաւարած էք, չէք վարանիր ստելու, մանաւանդ եթէ ձեր սուտը պիտի նպաստէ մօտիկ անձ մը նեղ կացութեան դուրս բերելու: Հետեւաբար, «ճերմակ» սուտի համակիր մըն էք:  
● Եթէ 20 - 60 կէտ հաւարած էք, ժամանակ է, որ ձեր ընթացքը վերատեսուրեան ենթարկէք եւ հրաժարիք նշմարտութիւնը ծածկելէ:  
● Եթէ հազիւ 20 կէտ հաւարած էք, եկէք լրջօրէն դուր ձեզի հարց տուէք, քէ ինչօր ալ սպասեալ հետեւած էք նշմարտախօսութեան:

## ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ

### ԱՐԵՒՈՒՆ ԲԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԻՔՆԵՐԸ

Թէեւ տեւարար կը լսենք ու կը կարդանք արեւուն վնասներուն մասին, բայց եւ այնպէս մեզմէ շատ - շատեր կը շարունակեն արեւու երկարատեւ լուսաբերութիւնը՝ ոչ միայն իրենց առողջութիւնը վտանգելով, այլ նաեւ՝ իրենց մորթին եւ գեղեցկութեան վնասելով:  
Պէտք է արգար ըլլալ եւ ընդունիլ, որ արեւը նաեւ բարեգործ դեր կը խաղայ՝ չնայած չնայեցու պարագային:  
Հետեւաբար, կ'արժէ տեսնել, թէ մեր մորթը ի՞նչպէս կը տուժէ արեւու չափազանցուած լուսաբերութեան:



ԵՐԲ ԱՐԵՒԸ ԿԸ ԶԱՐԱՆԱՅ...  
● ԱՉՔԵՐԸ առաջին տուժողներէն կ'ըլլան, որովհետեւ արեւուն տակ աւելի ենթակայ ենք մեր աչքերը տեւարար թարթելու, ինչ որ կ'ընդունեն ստեղծման պատճառ կը դառնայ:  
● ՎԻՉԸ եւ շուտ կ'ազդուի եւ կը վնասուի արեւուն, մանաւանդ որ մենք ալ աւելի կարեւորութիւն կու տանք դէմքին, մոռնալով մեր վիզը:  
Հետեւաբար, շատ զգալուն մորթով օժտուած մեր վիզը ժամանակէն առաջ կը ծերանայ:

● ԱՅՏԵՐԸ սերով չպաշտպանուելու պարագային կրնան իրենց կարգին վնասուիլ: Մասնաւորաբար ձերմակ մորթ ունեցողներուն այտերը անբնականօրէն կը կարմրին, որովհետեւ այտերուն տակ գտնուող մազերակները զօրաւոր արեւուն չդիմանալով կը պայթին:  
● ՁԵՌՔԵՐԸ, բայց նաեւ՝ թեւերը, ուսերը եւ կուրծքին վերի բաժինը սրճագոյն արատներով կը ծածկուին, կրկին արեւուն վնասակար ճառագայթներէն չպաշտպանուելու պարագային:  
● ԴԻՄԲԸ, ինչպէս տեսանք, մեծագոյն տուժող է: Այսպէս, արեւուն կիզիչ ճառագայթներուն հակազդելով դէմքին մորթը «մեղանիւ» կ'արտադրէ, բայց խանգարումներ կը պատահին եւ դէմքին մակերեսը կը ծածկուի մեռած բջիջներով: Անշուտ, ասոր ճարտար կայ, բայց եւ այնպէս չի դադարի անպատեհութիւն ըլլալէ:

... ՈՒ ԵՐԲ ԲԱՐԻՔԻ ԿԸ ՎԵՐԱՇՈՒՄ  
Չափաւոր արեւը ոչ միայն գեղեցիկ գոյն կը շնորհէ, այլ նաեւ՝ լաւատես կը դարձնէ եւ կը բարձրացնէ մեր արամազրութիւնը:  
Շնորհիւ արեւուն, մեր մարմինը ՏԻ. կենսանիւթ կ'արտադրէ, իսկ այս կենսանիւթը կիրին միանալով տոկուն ոսկորներ կ'ապահովէ մեզի:

Արեւուն առաջին ճառագայթներուն հետ իւրոտ մորթ եւ բշտիկ ունեցողները շուտ կը քաշեն: Բայց, դժբախտաբար, իւրին եւ բշտիկներուն անհետացումը կարճատեւ ժամանակի համար է, որովհետեւ անոնք նոյն թափով եւ թեւեւ ալ քիչ մը աւելիով կրկին կը յայտնուին:

Պատրաստեց ՇՈՒԵԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ  
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ Ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ Կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

Հարսանեկական Քարտերու Ընդհանուր Հարսանեկական Ընդհանուր

**ՆՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ**  
**ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ**  
**ՁԵՐ ԸՆԴԱՋԱՏՆԵՐՈՒՆ**  
**ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.**


Տարեդարձի, անուանակոչութեան, նշանակութեան և ամուսնութեան տարեդարձի:  
Անձին անուանով, մականունով եւ ընտանեկան նկարներով, կէս ժամնոյ VIDEO CLIPեր  
ԲՈՂՈՐ ԱՌԻՍԵՐՈՒ ՁԵՐ VIDEO ԵՐԻՋՆԵՐԸ ԿԱՐՁԱՆԱԳՐԵՆՔ CDԻ ԿՐԱՅ

Հասց. - ԱՐԱ ԶԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.,  
Պուրճ Ընտան, Զաղաքապետարանի հրապարակ, հեռ. 01-261696 եւ 03-250518:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՄԵԿՆԵՑԱԻ ԻՆՏԻԱՆԱՓՈԼԻՍ

Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախաժամեր Միացեալ Նահանգներ իր մեկնումը հաւաստեց, որ Լիբանանի պարզեպալոյի ֆետերասիոնի մասնակցութիւնը տղոց աշխարհի ախոյեանութեան՝ հարպատ պատկերն է Լիբանանի կարողութեան բոլոր մակարդակներու վրայ եւ տարբեր մարզերու մէջ մասնակցելու փոխանակ մրցակցութեան:

Նախարար Յովնանեան մեկնեցաւ Մ. Նահանգներ՝ ներկայ գտնուելու համար Ինտիանապոլիսի մէջ տեղի ունենալիք պարզեպալոյի տղոց աշխարհի ախոյեանութեան մրցումներուն:

«Մ. Նահանգներ կ'ուղղուինք Լիբանանի պարզեպալոյի ազգային խումբին բարոյապէս պօրակցելու, կարելի եղածին չափ ապահովելէ ետք նիւթական բոլոր օժանդակութիւնները՝ խումբին բժշկական եւ թերթիք կարիքները հոգալու մտահոգութեամբ», ըսաւ ան:

Նախարար Յովնանեան կոչ ուղղեց բոլոր լիբանանցիներուն՝ պօրակցելու եւ քաջալերելու Լիբանանի պարզեպալոյի ազգային խումբը, շեշտելով համաշխարհային նման մարզական մրցաշարքի մը Լիբանանի մասնակցութեան կարելոյութիւնը:

### ԼՈՂԱՐՇԱԲ. ԵՌՔՈՅԱՍՍ

### ԻԱՆ ԹՈՐՓ ՏԻՐԱՑԱԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԵՏԱԼԻՆ



4 x 200 մետրի ոսկի մետալին տիրացած Մ. Նահանգներու խումբը

Ճափոնի Եորքհամա քաղաքին մէջ տեղի ունեցող համախաղաղական լողաշարի ախոյեանութեան հինգերորդ օրուան մրցումներուն, երէկ աստրալիացի Իան Թորփ շահեցաւ իր հինգերորդ ոսկի մետալը, երբ տղոց 100 մետր ապատ լողի մրցումներուն արձանագրեց 48՝ 84 արդիւնք մը: Արժաք մետալին տիրացաւ անոր ազգակից Էշլի Բալիս, որ արձանագրեց 49՝ 26 արդիւնք մը, իսկ պրոնկ մետալին ամերիկացի Նէյթ Տաչիսկ (49՝ 47):

Հակառակ անոր որ Աստրալիա 19 տարեկան Թորփի հետ շահեցաւ այս ախոյեանութեան իր 9րդ ոսկի մետալը, սակայն երէկ դարձեալ տիրական ներկայութիւն մը դարձան ամերիկացիները, երբ շահեցան երէկուան մնացեալ չորս ոսկի մետալները. այսպիսով 16ի բարձրագոյնը իրենց շահած ոսկի մետալներուն ընդհանուր հաշիւը:

Տղոց 200 մետր կոնակի լողի մրցումներուն, ոսկի մետալին տիրացաւ Աւրոն Փիրսոյ, որ արձանագրեց 1՝ 56՝ 88 արդիւնք մը:

Մնացեալ երեք ոսկի մետալները շահողները հանդիսացան ամերիկացի աղջիկները:

Աղջկանց 800 մետր ապատ լողի մրցումներուն, ոսկի մետալը շահեցաւ Տայան Մունց, որ արձանագրեց 8՝ 30՝ 45 արդիւնք մը:

Մնաստա Պիրտ շահեցաւ աղջկանց 200 մետր կոնքի լողի մրցումներուն ոսկի մետալը, արձանագրելով՝ 2՝ 26՝ 31 արդիւնք մը:

Վերջապէս ամերիկացիներուն չորրորդ ոսկի մետալին տիրացան՝ Նաթալի Բուկլիս, Մարի Հիլ, Տայան Մունց եւ Լինտսէյ Պենքո, որոնք աղջկանց 4x200 մետր ապատ լողի մրցումներուն արձանագրեցին՝ 7՝ 56՝ 96 արդիւնք մը:

### Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- **ԱՂՋԻԿՆԵՐ**
- 800 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ
- 1.- Տայան Մունց (Մ. Ն.) 8՝ 30՝ 45
- 2.- Մաշիքո Եամատա (Ճափոն) 8՝ 31՝ 89
- 3.- Հէյլի Փիրսոյ (Մ. Ն.) 8՝ 32՝ 27
- 200 ՄԵԹՐ ԿՈՆԻՐԾՔԻ ԼՈՂ
- 1.- Ամանտա Պիրտ (Մ. Ն.) 2՝ 26՝ 31
- 2.- Լիզլի Ճոնզ (Աստրալիա) 2՝ 26՝ 42
- 3.- Քրիսթի Քոլվալ (Մ. Ն.) 2՝ 27՝ 59
- 4x200 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ
- 1.- Մ. Ն. 7՝ 56՝ 96
- 2.- Աստրալիա 7՝ 59՝ 25
- 3.- Ճափոն 8՝ 04՝ 01

- **ՏՂԱՔ**
- 100 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ
- 1.- Իան Թորփ (Աստրալիա) 48՝ 84
- 2.- Էշլի Բալիս (Աստրալիա) 49՝ 26
- 3.- Նէյթ Տաչիսկ (Մ. Ն.) 49՝ 47
- 200 ՄԵԹՐ ԿՈՆԻՐԾՔԻ ԼՈՂ
- 1.- Աւրոն Փիրսոյ (Մ. Ն.) 1՝ 56՝ 88
- 2.- Մեթիւ Ուեյլ (Աստրալիա) 1՝ 57՝ 69
- 3.- Քէյթ Պիլլըրզ (Քանադա) 1՝ 59՝ 35

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.

	ՈՍԿԻ	ԱՐՃ.	ՊՐ.
1.- Մ. Ն.	16	14	12
2.- Աստրալիա	9	11	3
3.- Ճափոն	2	2	8
4.- Քանադա	0	0	3
5.- Զինաստան	0	0	1

### ԹԵՆԻՍ. ԵՌԲ. ԷՍ. ՕՓԸՆ

### ՍԱՐԳՍԵԱՆ ՅԱՂԹԵՑ ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆԻՆ

Երբ. էս. Օֆընի Ա. Հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան երէկ, Հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ մրցաշարքէն դուրս ձգեց Ուիլյամսոնի աւարտականին Հասած արժանթինա Հասթ Նալպանտեանը, որ միջազգային թենիսի ֆետերասիոնին կողմէ դասուած է 16րդ: Սարգսեանէն 6-1, 6-4 եւ 6-4 արդիւնքով պարտութիւն մը կրած Նալպանտեան կը դառնայ առաջին անգամի մարզիկը, որ կանոնէն դուրս կը մնայ մրցաշարքէն:

Բ. Հանգրուանին Սարգսեանի մրցակիցը պիտի ըլլայ գերմանացի

2 եւ 6-2  
Ժամ - Ռընէ Լիսնա (Ֆրանսա) - 23.- Ռայնըր Ծիոլըր (Գերմանիա) 3-6, 6-7, 6-4 եւ 4-0 (Շիուրլըր՝ մրցումը կիսատ ձգած)

17.- Փիլիպ Սամփրաս (Մ. Ն.) - Ալպեր Փոքրաս (Սլովակիա) 6-1, 6-4 եւ 6-4

● **ԱՂՋԻԿՆԵՐ**

3.- Ճեյմս Ֆլոր Քափրիաթի (Մ. Ն.) - Պեթրանի Մաքեթ (Մ. Ն.) 6-0 եւ 6-0

23.- Փեթրի Ծնայտըր (Ջուրջերիա) - Նաոյա Փերրովա (Ռուսիա) 7-6, 5-7 եւ 6-2

32.- Փաուլո Սուարես (Արժանթին) - Մարի Փիլիպ (Ֆրանսա) 7-6 եւ 6-3

6.- Մոնիքա Սելեշ (Մ. Ն.) - Ջոնֆիա Կուպարի (Հունգարիա) 6-3 եւ 6-3

2.- Վիլյամս Ուիլյամս (Մ. Ն.) - Միքայէլ Լուբիչ (Խրուսիա) 6-0 եւ 6-0

9.- Մարիոն Հիլկիս (Ջուրջերիա) - Մարիսա



Էլենա Պոլիցա

Էլենա Պոլիցա (Մ. Ն.) - 6-3, 5-7 եւ 6-4

14.- Ջանտա Ռուպին (Մ. Ն.) - Ժիլի Բրեյպաս (Մ. Ն.) 6-1 եւ 6-3

29.- Պարպարա Շէր (Աւստրիա) - Ասա Սվեդսըն (Շուէտ) 6-3 եւ 6-2

1.- Սերենա Ուիլյամս (Մ. Ն.) - Տիեարա Մաֆիցա (Ռուսիա) 6-0 եւ 6-1

● **Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ**

13.- Սիլվիա Ֆարինա Էլիա (Իտալիա) - Էլսա Բայէն (Պելճիքա) 6-2 եւ 6-2

Սրեֆանի Ֆորթեց (Ֆրանսա) - Աննելիք Ուիլյամս (Ինտոնեզիա) 7-5 եւ 6-1

Էլենա Պոլիցա (Ռուսիա) - Ելենա Տորիչ (Նիկուարիա) 6-3 եւ 6-2



### Նիքոլա Մասիւ

Ալեքսանտր Փոփ, որ Ա. Հանգրուանի պարտութեան մատնած էր շուէտացի Անտրէաս Վենսիկուէրան:

Այլ անակնկալ մը ստեղծեց Նիքոլա Մասիւ (Չիլի), որ յաջողեցաւ պարտութեան մատնել 27րդ դասուած Նիքոլա Նափենթին (էքուատոր)՝ 6-4, 6-3, 6-7 եւ 7-5 արդիւնքով:

Աղջկանց մրցումներուն մեծագոյն անակնկալը ստեղծեց Ռուս Էլենա Պոլիցան (Բ. Հանգրուան), որ մրցաշարքէն դուրս ձգեց 5րդ դասուած Ելենա Տորիչը (Ետուկուսիա), արձանագրելով՝ 6-3 եւ 6-2 արդիւնքով յաղթանակ մը:

Ստորեւ՝ երէկուան կարգ մը կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.

- **ՏՂԱՔ**
- 33.- Կրէկ Ռուսետսքի (Բրիտանիա) - Ալեքս Քիմ (Մ. Ն.) 6-1, 4-6, 7-6 եւ 6-3
- 7.- Խուան Բարլոս Ֆերբո (Սլովակիա) - Ուեյն Արքիթ (Աւստրալիա) 7-6, 7-6, 3-6 եւ 7-5
- 5.- Թիմ Էնեման (Բրիտանիա) Է Քիլոմաս Բեթոլա (Ֆիլիպին) 6-1, 6-1 եւ 6-1
- Կուսարու Քուէրթեյն (Պրագի) - Ժիլիէն Պուքե (Ֆրանսա) 3-6, 7-6, 6-1 եւ 6-0
- 1.- Լէյթըն Հուլիք (Աւստրալիա) - Նիքոլա Քուրթի (Ֆրանսա) 6-2, 6-3 եւ 6-3
- Թոմաս Էնքվիսթ (Շուէտ) - Մաթիաս Պոէքըր (Մ. Ն.) 6-2, 6-3 եւ 7-6
- 18.- Ալեքս Քորթիս (Սլովակիա) - Իրաքի Լապոն (Վրաստան) 6-3, 6-4 եւ 6-2
- 19.- Ջալիկ Մալիսե (Պելճիքա) - Ալպեր Մոնթանես (Սլովակիա) 7-5, 6-

### ՄԱԼԱԿԱ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԿԸ ՀԱՍՆԻ ԵՌԲ. Է. ԷՖ. ԱԻ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

Ինթերթոթո ֆուտբոլի մրցաշարքի աստիճանական հանգրուանի դարձի մրցումներէն ետք յստակացան այն երեք խումբերը, որոնք ապահովեցին Երբ. Է. Է. Է. Է. Ա. Ի իրենց տունը: Երեք խումբերն են. Մալաքա, Եթիոպիա եւ Ֆուլիմ: Վիարէալի հետ իր կատարած դարձի մրցումին Մալաքա 1-1 արդիւնքով (երբ՝ 1-0, Ի նպատակ Մալաքայի) հաստատուեցին մը արձանագրելէ ետք, ֆուտբոլի իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ապահովեց Երբ. Է. Է. Է. Ա. Ի իր տունը: Այսպիսով, անիկա Սելթա Վիլյոն, Ռեալ Պեթիսէն եւ Ալաբեսէն ետք դարձան չորրորդ խումբը, որ անոնց հետ այս եղանակին պիտի մասնակցի այս մրցաշարքին: Մրցումին վերջին վայրկեանին, երեք մարզիկներ (որոնցմէ երկուքը՝ Վիարէալ) կարծիք քարտ ստացան, իրարու հետ կռիւ մը ունենալէ ետք:

Եթիոպիա 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Լիլը, (երբ՝ 1-0 Ի նպատակ ֆրանսական կապիտին) իր կարգին ապահովեց իր տունը: Վերջապէս, Ֆուլիմ հանդիսացաւ երրորդ խումբը, որ ապահովեց իր տունը, 3-1 արդիւնքով (երբ՝ 2-2) պարտութեան մատնելէ ետք Պոլիսիան:

**ԱՇՇԵՆ ԹՈՒՐԶ - ՈՒՇԱԿՐՈՒԹԻՆ**

● **14-21 Սեպտեմբեր.** բացառիկ շրջապտոյտ. CALYPSO Գաւով, զեղոյի ընտրութիւն, այցելութիւն յունական վեց կղզիներ եւ Աթէն, ամէն օր խրախմածք. գին փոխան 470\$ 395\$-էն սկսեալ:

● **7-11 Սեպտեմբեր.** Կիպրոս, զինի փառատօնի առիթով, լման պտոյտներով, գին 275\$ եւ 370\$:

● **4-11 Նոյեմբեր.** Բայապատի ոսկի Աշուն՝ բացառիկ շրջապտոյտ Երեւան, լման պտոյտներով Ա. կարգի պանդոկ. գին 585\$:

● **ԱՇՇԵՆ ԹՈՒՐԶ - 01-261177, 01-240654, 03-233978:**

---

**ԻՆՉ ԿՐԵՆ ԿԱՄ ԿՐԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ ԸՈԼԵՃԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ**

«... Կ'աշխատիմ որպէս ոսկերչական կադապրագործ Պուրճ Համուտի մէջ: Ծնորիւ Փոլիկլոթի եւ ընկերներէս աւելի կը գնահատուիմ եւ կը վարձատրուիմ...»:

**ՍԱԳՕ ԵԱՆԵՐԵԱՆ**

### ՊՈՒՐԳ ԳԱՍՈՒՏԻ ՄԷՋ

### ՎԱՂԸ Հ.Մ.Ը.Մ. - ԱՆՍԱՐ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Ֆուտբոլի բարեկամական մրցումի մը ընթացքին, վաղը՝ Ուրբաթ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կը մրցի Անսարի դէմ:

Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ վաղը տեղի ունենալիք այս մրցումը կրնայ լուսագոյնը լուսաբանել խումբին համակիրները, որոնք ներկայ գտնուելով պիտի տեսնեն մարզիկներուն տարած մեծ աշխատանքը՝ ամրան դադարին ընթացքին:

Վստահաբար հին մարզիկները ծանօթ են բոլորին, որոնց կողքին սակայն ներկայ են նորեկներ եւ ... ուրիշներ (տեսնել՝ երէկուան մեր մարզական էջով): Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կապիտին հետ դաշտ պիտի չներկայանայ Գօգօ Ալոպեան, որ փոխանցուած է Օլիմպիքի:

### ՓԻՆԿ ՓՈՆԿ

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԿՐՏՍԵՐՆԵՐԸ ԵՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԼԱԻԱԳՈՅՆՆԵՐԸ



Աւստրալիացի բաժակը կը ստանայ Ամշիթ ակումբի Գալապոս Անտրէ Լահուտէ

Ամշիթի մէջ տեղի ունեցող փինկ փոնկի մրցաշարքին, 91-92ի ծնունդ դասակարգի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. անգամ մը եւս փաստեց, որ կը մնայ Լիբանանի լաւագոյններէն, նոյնիսկ կրտսերներու պարագային: Տիտղոսի տիրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ Աւստրալիացիները, որ իր կատարած երեք մրցումներուն ալ արձանագրեց երեք յաղթանակ, առանց նոյնիսկ սէթ մը զիջելով իր մրցակիցներուն:

Աւստրալիացիներ անհնայ եղաւ իր մրցակիցներուն նկատմամբ եւ բոլորին պարտութեան մատնեց 2-0 արդիւնքով: Թամզի Հայէք, Ֆիլիպ Աքիթի եւ Ղազի Հայէք գրեթէ ոչինչ կրցան ընել Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ խոստացող կրտսեր մարզիկին դիմաց, որ իր յարատեւ փորձերուն շնորհիւ շնչահեղձ ըրաւ իր մրցակիցները:

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻՐ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎԻԳԵՆ ԹՆՃՈՒԿԵԱՆ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՄԵԼՔՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները՝ ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

### ՄՇԵՐԻ ԵՒ ՆԱՆԻԻ

Ս. Պսակի Խորհուրդին Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Կնքահայրութեամբ՝ ԳԻՆ ԹՆՃՈՒԿԵԱՆԻ

Կնքամայրութեամբ՝ ԱՆԱՇԻՏ ՊԱԼԵԱՆԻ

- Ներկայս ընդունիլ իրրեւ անձնական հրաւեր:
  - Շնորհատուութիւն տեղւոյն վրայ:
- E-mail: meher@liberate.com

### ՆՈՒՈՒԹԻՆ PHOTO NERSES

### ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Ձեր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէք նոր հասած ԱՐԳԻԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով, որակաւոր եւ գաւազան չափերով: Ստանձնումը՝ 20 վայրկեանէն: Լուսանկարները կ'արձանագրենք CDH եւ կամ FLOPPY տիպի վրայ:

Cameraներու ձոյն հաւաքածոյ, ալպոմներ եւ նկարի շրջանակներու ըմտիր տեսակաւոր:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:

Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց, «Սամբոլ Արմ»-ի դիմաց: Գեա. 01 - 261858 եւ 01 - 255992:

